

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать **БЕСПЛАТНО**.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for **FREE** scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



Spruner, Atlas Antiquus, 1865

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՏԱՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

Քարտեզագրական ժառանգություն

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ



ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1) *Historic Maps of Armenia. A Cartographic Heritage. IB Tauris, London–New York, 2004.*
- 2) Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ: *Армения в мировой картографии. Փրինթինգոն, Երևան, 2005:*
- 3) *Countries South of the Caucasus in Medieval Maps. Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում: Gomidas Publ., London, 2007.*
- 4) *The Invention of History. Gomidas Publ., London, 2009. Reprinted 2010. Showcasing of Imagination + DVD. 2009.*
- 5) *Հորինված պատմություն, հայերեն և ռուսերեն: Мифологизация истории. Gomidas Publ., London, 2010.*
- 6) *Clash of Histories in the South Caucasus. Bennett & Bloom, London, 2012.*
- 7) *Азербайджанские историко–географические фальсификации. Москва: Ключ, 2013.*
- 8) *Հորինված պատմություն, պարսկերեն, جعل تاريخ Թեհրան, 2013:*
- 9) *Armenia: A Very Brief History, by Christopher Walker. Yerevan, 2014. Editor R. Galichian. In 6 languages.*
- 10) *Historic Maps of Armenia. Abridged and Revised version. Bennett & Bloom, London, 2014, reprinted 2017.*
- 11) *Historic Maps of Armenia. Three language version. Yerevan, 2015.*
- 12) *A Glance into the History of Armenia through Cartographic Records. Bennett & Bloom, London, 2015.*
- 13) *Clash of Histories in the South Caucasus. (Persian). Saless Publications, Tehran 2015.*
- 14) *History of Armenian Cartography. Bennett & Bloom, Zangak, Yerevan, 2017.*
- 15) *Հայ քարտեզագրության պատմությունը, «Զանգակ» հրատ., Երևան, 2017:*
- 16) *Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները, «Զանգակ» հրատ., Երևան, 2017–2018:*

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕՏԱՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ

Քարտեզագրական ժառանգություն

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 2018

ՀՏԴ 912.4:93/94
ԳՄԴ 26.17+63.3
Գ 197

Գալչյան Ռուբեն

Գ 197 Հայաստանը օտարների քարտեզներում: Քարտեզագրական ժառանգություն/ Ռ. Գալչյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2018. — 120 էջ:

«Հայաստանը օտարների քարտեզներում: Քարտեզագրական ժառանգություն» գրքի անգլերեն համառոտ տարբերակը «Հայաստանի պատմական քարտեզներ» անվանումով առաջին անգամ հրատարակվել է 2014 թ. Երևանում, որը վերահրատարակվել է 2017 թ.: Այս հատորը համառոտ՝ վերափոխված և փոքրադիր տարբերակն է «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ» գրքի, որը մեծ չափերով հրատարակվել էր Երևանում 2005 թվականին:

Այստեղ ներկայացված են մ. թ. ա. 6-րդ դարից մինչև ներկա օրերի հիմնականում օտար քարտեզագետների պատրաստած քարտեզները՝ նպատակ ունենալով ցույց տալու, թե ինչպես են օտարները ներկայացրել Հայաստանն իրենց պատրաստած քարտեզներում: Քարտեզներից յուրաքանչյուրն ունի իր պատկան բացատրությունները:

Հրատարակությունը հնարավորություն է տալիս աշխարհագրությամբ, քարտեզագրությամբ և պատմությամբ հետաքրքրվողներին ու հետազոտողներին տեսնելու քարտեզների վերատպված բարձրորակ պատկերները:

ՀՏԴ 912.4:93/94
ԳՄԴ 26.17+63.3

ISBN 978-9939-68-649-3

© Ռուբեն Գալչյան, 2018
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2018

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Գրքիս առաջին հրատարակության համար ընտրած քարտեզները հավաքելու համար դիմել էի աշխարհի տարբեր անկյուններում բնակվող ընկերներին, որոնց ցուցակում են Արմեն Մուրաֆյանը, Ջիմ Սայբոլդը (ԱՄՆ), Բրիտանական գրադարանի քարտեզագրության բաժնի ժամանակի տնօրեն Փիթըր Բարբերը և ուրիշներ, որոնց շնորհակալ եմ աջակցության և խորհուրդների համար: Շնորհակալ եմ նաև բոլոր այն հիմնարկներին ու բարեկամներին, որոնք թույլատրել են իրենց հավաքածուներից վերատպումներ կատարել այս հատորում, դրանցից ամենակարևորը եղել է Բրիտանական գրադարանը:

Վերջապես շնորհակալ եմ կնոջս՝ Մարիետին, որ առանց գանգատվելու հանդուրժեց իմ երկարատև բացակայությունները մեր միասնական առօրյայից, երբ ամեն ինչ նրան թողնելով՝ առանձնանում էի աշխատելու գրքիս վրա:

Ռուբեն Գալչյան
Լոնդոն–Երևան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Քարտեզներ: Նախաբան</i>	5
<i>Հայաստան: Պատմական ակնարկ</i>	7
<i>Ներածական</i>	9
<i>Հայաստանի քարտեզների համառոտ պատմություն</i>	13
<i>Աշխարհագրական անունների համառոտ բառարան</i>	27
<i>Վերատպված քարտեզների ցուցակ</i>	31
<i>Քարտեզներ և բացատրություններ</i>	35
<i>Գրականություն</i>	111
<i>Անվանացանկ</i>	113



ՔԱՐՏԵԶՆԵՐ: Նախաբան

Քրիստոնյեք Ուսքեր

Այս հատորում ներկայացված քարտեզները, ինչպես նաև կից ուսումնասիրությունը փաստում են, որ հին քարտեզները ցուցադրական հետաքրքրաշարժ իրեր կամ շրջանակված և պատից կախելու համար ակնհասաճ առարկաներ լինելուց առավել պատմության, գիտության և միջազգային առևտրի լուրջ ուսումնասիրության համար հիմնական և կենսական կարևորություն ունեցող նյութեր են:

Առանց քիչ թե շատ ճշգրիտ մի քարտեզ ուսումնասիրելու՝ անհնար է ըմբռնել հին և արդի աշխարհի քաղաքական զարգացումները: Անհնար է արժևորել իշխանությունների ուժի հենարանների դերն ու ազդեցությունը՝ առանց անդրադառնալու տարածաշրջանային առանձնահատկություններին և փոխադրություններին: Իշխող և հպատակ շատ ազգերի անխոհեմ գործերն ու գոտությունները հաճախ ծագում են քարտեզների անիրազեկությունից (կամ շատ փոքր աստիճանաչափով գծված քարտեզներ դիտելուց): Թե՛ պատերազմի և թե՛ խաղաղության պայմաններում անիրաժեշտ են հնարավորին չափ կատարյալ քարտեզներ: Պատմությունն ուսումնասիրողների համար շատ կարևոր է եղել ձեռքի տակ ունենալ ուսումնասիրվող տարածքի ճշգրիտ քարտեզը:

Ինչպես լուսաբանում է ներկա ուսումնասիրությունը, քարտեզագրությունն ու գիտության զարգացումը ընթացել են զուգահեռ՝ սկզբնական շրջանում արագ՝ Ալեքսանդրիայի հունական միջավայրում, իսկ հաջորդող երկար դարերի ընթացքում՝ դանդաղ

կամ մինչև իսկ հետընթաց զարգացումով, նախքան վաղ ժամանակակից շրջանի գիտական մեթոդների և ուսումնասիրության երևան գալը:

Ծովային առևտրականները (կամ ծովահենները) կարիք ունեին ամենաճշգրիտ ծովային քարտեզների, և ներկա ուսումնասիրության մեջ այդ քարտեզների գաղտնապահության մասին տրված նկարագրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Քարտեզներն ունեն նաև քաղաքական կարևորություն: Ներկա ուսումնասիրությունը շատ օգտակար է իրականությունը կեղծիքից առանձնացնելու համար, ինչը նաև վերաբերում է հին քարտեզներում «Հայաստան» անվան գործածված լինել-չլինելու հարցին: Մինչև 19-րդ դարի վերջերը «Հայաստան» եզրի ներկայությունը քարտեզագետներին չէր անհանգստացնում: Հավանաբար այդ ժամանակների քարտեզագետներին ոչ ոք չէր հրահանգել խափանել որոշ աշխարհագրական եզրեր: Հնարավոր է նաև, որ նրանց իշխանավորները դեռևս չէին կորցրել իրենց մարդկային խիղճը:

Այս համառոտ, բայց կարևոր ուսումնասիրությունը վերհիշել է տալիս մեզ ոչ միայն այն գործնական դժվարությունները, որոնք պետք է հաղթահարվեին նախքան ճշգրիտ քարտեզների երևան գալը, այլև պատմության, քաղաքական գաղափարների զարգացման և/կամ առևտրի առաջադիմության ուսումնասիրության համար ձեռքի տակ քարտեզ ունենալու մեր օրերի կենսական պահանջը:

ՀԱՅԱՍՏԱՆ: Պատմական ակնարկ

Հայերը Փոքր Ասիայի, Պարսկաստանի և Կովկասի հարավային շրջանների միջև տեղադրված Հայկական լեռնաշխարհի բնիկներն են և մաս են կազմում հնդեվրոպական մշակութային աշխարհի: Առաջին ռազմաքաղաքական կազմավորումներն այս տարածքում հայտնի են մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերից (ինչպես, օրինակ՝ իտեթական արմատներ ունեցող Հայասան): Նախահայկական ցեղերը այս կազմավորումների էթնիկ բաղկացուցիչներից մեկն էին, եթե ոչ գերակշռողը: Նրանք կազմում էին նաև Հայկական լեռնաշխարհի տարածքում դասական արևելյան տեսակի պետության՝ Ուրարտուի (մ. թ. ա. 9–6–րդ դարեր) բնակչության գլխավոր բաղկացուցիչը: Ուրարտուի անկումից հետո հայկական պետական կազմավորումները շարունակաբար հաջորդեցին մեկը մյուսին մինչև 5–րդ դարը (երբեմն ընդարձակ սահմաններով, որոնք գերազանցում էին անգամ Հայկական լեռնաշխարհի տարածքը, ինչպես որ էր մ. թ. ա. առաջին դարում՝ Տիգրան Մեծի օրոք):

Չորսուկես դարերի ընդհատումից հետո հայկական պետականությունը վերականգնվեց 9–րդ դարի վերջին և գոյատևեց մինչև 11–րդ դարի կեսերը: Չնայած մի շարք փոքր հայկական իշխանությունների, որոնք շարունակում էին գոյատևել Հայկական լեռնաշխարհի տարածքում, և չնայած Կիլիկիայի հայկական պետության առկայությանը (12–14–րդ դարեր) լեռնաշխարհի սահմաններից դուրս, ազգային պետությունը որպես այդպիսին վերականգնվեց միայն 20–րդ դարի սկզբին, երբ Արևելյան Հայաստանի տարածքում ձևավորվեց Հայաստանի Հանրապետությունը (1918–1920,

շուրջ 60 հազ. քառ. կմ): 1920 թվականին ստեղծվեց Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, որը, որպես հետևանք Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի զավթողական քաղաքականության, զբաղեցնում էր միայն 29,8 հազ. քառ. կմ տարածք:

Երկարատև չգոյությունից հետո պետականության վերականգնումը հնարավոր դարձավ ի թիվս այլ գործոնների, նաև ոչ քաղաքական բնույթի հզոր էթնոհամախմբող գործընթացների շնորհիվ, որոնք ապահովում էին հայերի գոյատևումը այն ժամանակաշրջաններում, երբ նրանք ընդգրկված էին այլ էթնոքաղաքական կազմավորումների մեջ (Պարսկաստան, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն, Օսմանյան կայսրություն, Ռուսական կայսրություն, ԽՍՀՄ): Հայոց էթնիկությունը պահպանող երկու հիմնական գործոններն էին միաբնակ վարդապետությունը դավանող Հայոց ինքնուրույն եկեղեցին (քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունվել էր Հայաստանում 301 թ.) և գիրը (հայկական այբուբենը ստեղծվել էր Մեսրոպ Մաշտոցի կողմից 405 թվականին):

Պետականության վերականգնմանն ուղղված երկարատև պայքարը դրսևորման նոր ձև ընդունեց՝ կապված եվրոպական և ռուսական քաղաքականության՝ Մերձավոր Արևելք ներթափանցման հետ: Այս քաղաքականության լծակներից մեկը դարձավ այսպես կոչված «Հայկական հարց»-ը, որը պաշտոնական միջազգային ճանաչում ձեռք բերեց 1878 թվականին Սան Ստեֆանոյի խաղաղության պայմանագրի և Բեռլինի կոնգրեսի շնորհիվ: 1890–ականներից ի վեր՝

մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, Օսմանյան կայսրության հայկական բնակչությունը դարձավ պարբերական զանգվածային ջարդերի և կոտորածների առարկա՝ տալով հարյուր հազարավոր զոհեր: Առաջին համաշխարհային պատերազմը երիտթուրքական կառավարությանը հնարավորություն բնական էր լուծելու Հայկական հարցը Թուրքիայի բնիկ հայկական բնակչության էթնիկական գոման ճանապարհով: 1915–1923 թթ. իրականացվեցին հայերի կոտորածներ և զանգվածային տեղահանություններ, այդ ջարդերի վերջին ափսոսանքը հասան նաև հարավկովկասյան որոշ շրջաններ, ինչպես, օրինակ՝ Բաքու (1918) և Շուշի (1920):

Միջին դարերից սկսած՝ օտար նվաճումների և պետականության բացակայության հետևանքով ընթանում էր հայկական Սիյուռքի ձևավորման գործընթացը: Համենայն դեպս, ցեղասպանության հետևանքով նրա շարքերը հսկայական չափերով աճեցին:

1980–ական թվականների վերջերին հայոց քաղաքական կյանքը մեծապես պայմանավորված էր Լեռնային Ղարաբաղի (հայկական տարածք Ադրբեյջանի կազմում)՝ Հայաստանի հետ վերամիավորմանն ուղղված ժողովրդական շարժումով: Առաջին անգամ խորհրդային իշխանության պայմաններում 1990 թ.

Հայաստանում կայացան ժողովրդավարական ընտրություններ: 1990 թ. օգոստոսի 23–ին ընդունված Հոչակագրի համաձայն՝ Հայկական ԽՍՀ–ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն, իսկ 1991 թ. սեպտեմբերի 21–ին կայացած հանրաքվեն հոչակեց անջատումը ԽՍՀՄ–ից և անկախ Հայաստանի Հանրապետության ծնունդը:

1915 թվականին Օսմանյան կայսրության ծրագրած և ձեռնարկած ցեղասպանության նպատակն էր հայերին բնաջնջել իրենց պատմական հայրենիքում ու ընդհանրապես վերացնել այդ տարածաշրջանից: Այդ քաղաքականության զոհը դարձան ավելի քան մեկ և կես միլիոն հայեր:

Սակայն հսկայական ճիգերով և մեծ զոհաբերություններով Պատմական Հայաստանի հողերի մոտ մեկ տասներորդի վրա կերտվեց նոր Հայաստան, որտեղ ներկայում հիմնված է անկախ Հայաստանի Հանրապետությունը: Այսօր Հայաստանը՝ որպես երկիր, և հայերը՝ որպես Հայաստանի քաղաքացիներ կամ հայկական Սիյուռքում բնակվողներ, մեծ դեր ու ներդրում ունեն զանազան գիտությունների, բժշկության և մշակույթի տարբեր ոլորտներում և աշխարհին ներկայանում են որպես տարբեր երկրների հանրության կողմից հարգված, մեծարված և լիարժեք քաղաքացիներ:



ՆԵՐԱԾԱԿԱՆ

Այս գրքի մասին մտածել եմ այն օրից, երբ 1976 թվականին մի քանի հին քարտեզ գնեցի և սկսեցի մոտիկից ծանոթանալ դրանց: Մտածում էի պատրաստել մի գիրք, որի մեջ հավաքված լինեն աշխարհահռչակ քարտեզագետների կարևոր քարտեզների գոնե մի մասը, որը վերաբերում է Հայաստանի շրջանին: Աշխատանքը սկսել էի ծրագրել, երբ ընկերներիցս մի քանիսը քաջալերեցին այս մտահղացումը գրքի կերպարանքով ներկայացնելու առաջարկը: Պետք է նշել, որ երկար տարիների հետազոտություններից հետո գիրքն առաջին անգամ լույս տեսավ 2004-ին անգլերենով՝ «Հայաստանի պատմական քարտեզները» վերնագրով, որը փոքր հավելումներով և փոփոխություններով թարգմանել եմ հայերեն: 2005 թ. լույս տեսած հայերեն տարբերակը կոչվում էր «Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ»: Սրանք երկուսն էլ ծավալուն և մեծ հատորներ են:

2014 թվականին որոշեցի հրատարակել անգլերեն գրքի համառոտ՝ փոփոխված և ավելի հանրամատչելի տարբերակը, որն այս հատորի անգլերեն տարբերակն է և կոչվում է իր նախկին անվանմամբ: Այս գիրքը գիտական աշխատություն կամ հետազոտություն չէ, ինչպիսին արել են ուրիշ արժանավոր պատմաբաններ ու քարտեզագետներ, այլ պարզապես մի աշխատություն է, որի մեջ ընդգրկված են աշխարհի հռչակավոր և կարևորագույն քարտեզագետների պատրաստած քարտեզներից մի քանիսը, որոնք վերաբերում են Հայաստանի ընդհանուր տարածքին: Ներկայացված քարտեզներն այսօր ընդգրկված են աշխարհի քարտեզագրական մշակույթի ավանդության ցուցակներում: Այդ

իսկ պատճառով էլ ներկա հատորի անվանումը փոխել եմ և կոչել «Հայաստանն օտարների քարտեզներում»:

Հետազոտությանս ընթացքում աշխատել եմ գտնել հնագույն քարտեզը, որտեղ նշված լինի Հայաստանի (կամ Արարատ, Ուրարտու) անունը, այնուհետև անդրադարձել եմ հույն, ալեքսանդրիացի և իսլամական աշխարհագրագետների աշխատանքներին, ապա միջնադարի, եվրոպական Վերածննդի և վերջապես մերօրյա աղբյուրներին:

Ընթերցողին ներկայացնում եմ նաև քարտեզագրության համառոտ պատմությունը՝ սկսելով հին ժամանակներից մինչև այսօր, նշելով քարտեզագրության և քարտեզ պատրաստելու աշխատանքում եղած կարևոր փոփոխություններն ու զարգացումները, նաև տալով որոշ տեղեկություններ Հայաստանի քարտեզների, ինչպես նաև կարևորագույն աշխարհագրագետների ու քարտեզագետների կյանքի ու գործունեության վերաբերյալ:

Հատորի քարտեզներին նայելով՝ ընթերցողը կտեսնի, որ Հայաստան (Armenia) կոչվող երկիրը պատմականորեն աշխարհագրական մի տարածաշրջանում է, որը տեղադրված է Կովկասյան լեռնաշղթայի հարավում, Սև (Պոնտոսի) և Կասպից ծովերի (Հիրկանյան կամ Թաքարեստանի ծով) միջև, և դարերի ընթացքում շրջապատված է եղել հետևյալ երկրներով.

- Հյուսիսից սահմաններն են եղել Իբերիա-Վիրքը, Կովխիդա-Կողքինն ու Մեգրելիան, որոնք կազմում են այսօրվա Վրաստանը:

- Արևելքից՝ Ադվանքը (Կովկասյան Ալբանիա կամ Արբան), Դադատանը, Շիրվանը, Թալիշը և այլն, որոնցից որոշ տարածքներ այսօր միասնաբար կոչվում են Ադրբեջանի Հանրապետություն:
- Հարավ-արևելքից՝ Պարսկական Աբեմենյան և Սասանյան կայսրություններն ու նույն երկրի Ատրպատական (Իրանի Ադրբեջան) նահանգը, այսօրվա Պարսկաստանը:
- Հարավ-արևմուտքից՝ Տիգրիս գետը, Բաբելոնը, Քուրդիստանը և Ատրեստանը, որոնք մասամբ կազմում են այսօրվա Իրաքը:
- Արևմուտքից՝ հնագույն Լիդիան, Փոյուգիան, դրանց հետևորդները՝ պատմական Բյուզանդիոնը, Օսմանյան կայսրությունը և այսօրվա Թուրքիան:

Ավելի քան 25 դարերի ընթացքում Հայաստանի սահմանները հսկայական փոփոխությունների են ենթարկվել, և երկրի տարածքը փոփոխվել է՝ սկսած համահավասար Գերմանիայի ու Ֆրանսիայի միասնական տարածքից մինչև ներկայի Բելգիայի տարածքի չափերը:

Հայկական բարձրավանդակը կամ Հայկական լեռնաշխարհը երբեմն միտումնավոր վերանվանվում է Արևելյան Անատոլիա, որն ամբողջովին քաղաքականացված և սիսալ անվանում է, քանի որ Հայկական բարձրավանդակը ընկած է Անատոլիայից արևելք և Անատոլիայի մասը չի կազմում: Հայկական բարձրավանդակը Փոքր Ասիայից արևելք է և նրանից բաժանված է Սյվազի (Sivas) և Կեսարիայի (Kayseri) շրջանի հովիտով: Հայկական բարձրավանդակի Անատոլիա անվանման հեղինակներն են օսմանյան և թուրքական իշխանությունները, որոնք ցանկանում են հայկական որևէ անուն ջնջել Թուրքիայի սահմաններում եղած հողերից և հանել «Հայաստան» և «հայկական» անուններն իրենց այսօրվա տարածքից, որտեղ մինչև 1915 թվականը հայերն ապրել են առնվազն 2500 տարի:

Մինչև 18-րդ դարը Օսմանյան ձեռագրերում, հատկապես Մուստաֆա Իբն Աբդուլլահի աշխատություններում (1609–1657), ով ճանաչված էր «Քյաթիբ Չելեբի» կամ «Հաջի Խալիֆա» անուններով և առաջին օսմանցի աշխարհագրագետն էր, Վանի, Էրզրումի և Կարսի շրջաններն անվանվում էին Էրմանիստան (Հայաստան, տե՛ս քարտ. 29, 52, 55): Նրա ձեռագրի 41-րդ գլուխը կոչվում է «Արևմտյան Հայաստան», որը Օսմանյան գերիշխանության ներքո էր: «Էրմանիստան» անունը նշմարվում է նրա բոլոր աշխատություններում, բայց 19–20-րդ դարերում թուրքական նորատիպ գրքերում Հայաստան անունը տարածաշրջանից աստիճանաբար վերանում է և տեղի է տալիս «Արևելյան Անատոլիա» անվանը: Այս անունների թուրքացումն այսօր այն աստիճանի է հասնում, որ 20-րդ դարի հրատարակության մեջ Չելեբիի գրքի 41-րդ գլխի վերնագիրը փոխվել է «Արևելյան Անատոլիա»-ի: Նույնիսկ Վանի, Էրզրումի և այլ արևմտահայերի գործած գորգերն ու կարպետներն անվանվում են «Արևելյան Անատոլիայի»¹:

Մինչև վերջերս Թուրքիայում բռնագրավվում էին անտեղյակ զբոսաշրջիկների ունեցած այն գրքերն ու քարտեզները, որոնց մեջ Թուրքիայի տարածքի վրա որևէ տեղ նշված է հայ կամ Հայաստան անունը: Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի մեծագույն նվաճումներից էր գրավոր լեզուն արաբատառից լատինատառ դարձնելը: Այդպիսով հին փաստաթղթերն ու արխիվները, որտեղ կային նաև հայի ու Հայաստանի անունները, Թուրքիայի նոր սերնդի համար միանգամից դարձան անընթեռնելի, իսկ վերատպված գրքերում խմբագիրներն առանց որևէ դժվարության հանում են հայության հետ առնչվող որևէ նյութ կամ անուն:

Ինչ վերաբերում է այսօրվա Ադրբեջանի Հանրապետության դիրքորոշմանը, ապա բավական է հիշել, որ մի քանի ադրբեջանցի «պատմաբաններ» աշխա-

¹ Տե՛ս Լևոնտում տպագրվող ՀԱԼԻ ամսագրի ցանկացած համարը:



տում են փաստել, որ 19-րդ դարում հայերին Կովկասի շրջան են բերել ռուսները, և նախքան այդ դարաշրջանը Կովկասի հարավային տարածքում ապրել են միայն աղվանները: Թուրք պատմաբաններն աշխատում են նաև փաստել, որ թուրքական ցեղախմբերը Փոքր Ասիայի, այսինքն՝ Անատոլիայի բնիկներ են, որոնք այդ շրջանում բնակվել են ավելի քան 5000 տարի: Եթե նրանց հավատանք, ապա Հայաստանի ներկայությունը աշխարհագրական այդ շրջանում դառնում է հարցական, ինչին հակառակ են հատորիս մեջ արտասպասած բոլոր քարտեզները²:

Նույնքան սխալ է նաև Հայաստանը (կամ նույնիսկ Վրաստանն ու Ադրբեջանը) անվանել «Անդրկովկաս», որը նշանակում է Կովկասի այն կողմում: Այդ տերմինը աշխարհագրական տեսակետից միայն ճիշտ է Ռուսաստանի համար, իսկ այլ երկրների տեսակետից դա սխալ արտահայտություն է: Երբ խնդրին նայվի Իրանի կողմից, ապա «Անդրկովկաս» կնշանակի Ռուսաստանը: Նույն սխալն էլ վերաբերում է «Այարկովկաս» անվանմանը:

Մեկ այլ կարևոր կետ, որին պետք է անդրադառնանք, այն է, որ թուրքական ցեղերի՝ Հայաստան ներխուժումից հետո, երբ 14-15-րդ դարերում կազմավորվեց Օսմանյան կայսրությունը, Հայաստանի և հատկապես Մեծ Հայքի տարածաշրջանը երբեմն անվանվել է Թուրքումանիա: Այս տերմինը, որը գործածվում էր 17-18-րդ դարերում և հիմնականում Թուրքիայի քարտեզներում, նշանակում էր «Թուրքական Հայաստան»: Նույն ժամանակաշրջանի արևմտյան շատ քարտեզագետներ նույնպես օգտագործել են Հայաստանի այդ անվանումը (տե՛ս Ինձիճյան, Վենետիկ, 1806, էջ 13): Սա «Թուրքիա» և «Արմենիա» բառերի խառնուրդն է, որոնք միանալով դարձել են Թուրքումանիա: Այս բառի գործածությունը վերացավ 19-րդ դարասկզբին:

Ընթերցողի ուշադրությունը հրավիրում եմ այն բանի վրա, որ երբ տեքստի մեջ նշել եմ «Իբերիա», նպատակս Կովկասյան Իբերիան կամ Վիրքն է, որը Կոլխիդայի (հայերեն՝ Կողքիս) և Մեգրելիայի ու այլ մանր երկրների հետ միասնաբար կազմում են այսօրվա Վրաստանը: Իսկ «Ալբանիա» անունը նշում է Կովկասյան Ալբանիան, այսինքն՝ Աղվանքը, արաբերենով՝ Առան:

Բոլոր քարտեզներում և պատմական գրությունների մեջ մինչև 1918 թվականը Ատրոպատենը (Ադրբեջանի նախկին անունը) կամ Ատրպատականի շրջանը Արաքս գետի հարավային ափին է՝ այսօրվա Հայաստանի և Իրանի սահմանից հարավ: Արաքսի հյուսիսում առկա շրջանի «Ադրբեջան» անվանումը սկսեց օգտագործվել այն ժամանակվանից, երբ 1918 թվականին՝ Ցարական Ռուսաստանի անկումից հետո, հարավկովկասյան երկրները՝ Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, ձեռք բերեցին կարճատև անկախություն: Այս երեք հանրապետություններից «Վրաստան» և «Հայաստան» անունները գոյություն են ունեցել դարեր, բայց «Ադրբեջան/Ազերբայջան» անունը այս տարածաշրջանի համար մի նոր անվանում էր՝ ընդօրինակված Արաքսի հարավային ափին Իրանի «Ազերբայջան» (Ատրպատական կամ Ադրբեջան) նահանգի անվանումից³: Ադրբեջան անվանում ստացած նոր շրջանը մինչ այդ բաժանված էր խանությունների: Այստեղի երկրամասերից յուրաքանչյուր շրջան կոչվում էր իր առանձին անունով, օրինակ՝ հնում՝ Աղվանք, ապա Դերբենդի, Շիրվանի, Դաղստանի, Թալիշի, Շաքիի և այլ խանություններ:

Հատորիս մեջ պատկերված քարտեզների մեծամասնությունը ինչ-որ կերպ առնչություն ունի Հայաստանի հետ, սակայն դա չի նշանակում, որ Հայաստանի

² Ռուբեն Գալյան, Հորինված պատմություն, Լոնդոն, «Կոմիտաս» ինստիտուտ, 2010:

³ Տե՛ս Ռուբեն Գալյանի «Ադրբեջանական պատմամշակութային զեղծարարությունները» (2017) և «Հորինված պատմություն» (2010) հատորները:

շրջանի վերաբերյալ բոլոր քարտեզները ներկայացված են այստեղ:

Այստեղ վերատպված քարտեզներն ընտրել են ըստ հետևյալ հիմունքների: Առաջինն այն է, որ քարտեզագրական տեսակետից քարտեզն ունենա իր արժեքը: Երկրորդ՝ որ դա լինի իր ժամանակի քարտեզագրության արժանի ներկայացուցիչը, և ապա քարտեզը ներկայացնի իր ժամանակի լավագույն առաջադիմությունները և ոճը: Այս նպատակով օգտվել են Բրիտանական գրադարանի հսկայական հավաքածուից, ինչպես նաև Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Իրանի, Հայաստանի, ԱՄՆ-ի և այլ երկրների գրադարաններից ու թանգարաններից:

Քարտեզները հիմնականում պատրաստված են օտար մասնագետների ձեռքերով, որոնց մեջ բացառություն են կազմում միայն մի քանի կարևոր հայալեզու քարտեզներ՝ թիվ 14, 36, 37, 46 և 61 քարտեզները:

Գրքի հիմնական գլխում ամեն քարտեզի հետ առկա է դրան վերաբերող բացատրական տեքստ, որն ընթերցողին փոխանցում է քարտեզագրի և քարտեզի չափերի, աղբյուրի և պատրաստման թվականի մասին մանրամասն տեղեկություններ:

Դրան ավելացված են բացատրություններ քարտեզի յուրահատկությունների և տեսակի վերաբերյալ, ինչպես նաև այնտեղ Հայաստանը պատկերելու և ցու-

ցադրելու կերպը և նշված սահմանները: Հատորիս մեջ վերատպված քարտեզների տեսակներից են աշխարհացույց, մայրցամաքների և երկրամասերի քարտեզներ, որտեղ Հայաստանը որևէ կերպ առկա է, ինչպես նաև Հայաստանի և հարակից շրջանների բազմաթիվ քարտեզներ: Գրքում բոլոր քարտեզները դասավորված են տարեթվերի հերթականությամբ:

Ի վերջո, քարտեզները դիտելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ այս տարածաշրջանում ներկայում կա միայն երկու երկիր, որոնք գոյություն են ունեցել ավելի քան 2600 տարի՝ Պարսկաստանն ու Հայաստանը: Թուրքիա անվանումը քարտեզների մեջ երևան է գալիս ամենավաղը 14-րդ դարի կեսերին, այսինքն՝ «Հայաստանից» 2000 տարի հետո, իսկ Վրաստանը որպես միացյալ երկիր կայացել է 11-րդ դարում, իսկ քարտեզներում նշվում է միայն 14-րդ դարից: Մինչ այդ Վրաստանի շրջանում նշված են Կոլխիս, Իբերիա, Մեգրելիա, Իմերեթիա և այլ երկրներ:

Գալով Ադրբեջանին՝ տեսնում ենք, որ այդպես անվանված երկիրը երևան է եկել միայն 1918 թվականին: Իհարկե, խոսքս Ադրբեջանի Հանրապետության մասին է և ոչ թե՝ Պարսկական Ադրբեջան նահանգի:

Ռ. Գալյան

Լոնդոն-Երևան, 2018



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան

Ավելի քան 2500 տարի է, որ հայերն անընդ-մեջ ապրել են Հայկական բարձրավանդակում և հարևան շրջաններում: Հնագույն ժամանակներից այս երկիրը կոչվել է տարբեր անուններով, որոնցից են Ուրարտու, Նաիրի, Արմենիա, Հայաստան և Հայք: Այս անունները կարելի է տեսնել տարբեր ժամանակաշրջանների քարտեզներում, ձեռագրերում, արձանագրություններում և փաստաթղթերում:

Հնագույն քարտեզների և պատմության գրքերի մեջ Հայաստանը երբեմն առկա է որպես անկախ պետություն, երբեմն էլ բաժանված է հարևան կայսրությունների գերիշխանության ներքո, բայց և այնպես նրա անունը միշտ էլ հիշվում է՝ սկսած հին հունական, հռոմեական, իսլամական և այլ տեքստերից ու քարտեզներից մինչև այսօրվա նյութերը:

Քրիստոնեական քարտեզագրության մեջ Հայաստանը, որպես առաջին երկիր, որը 301 թվականին պետականորեն ընդունեց քրիստոնեական կրոնը, այստեղ ունի իր կարևոր տեղը, քանի որ առաջին դարից սկսած հայերը հիմնվել են Երուսաղեմում և այսօր էլ առկա են այնտեղ որպես քրիստոնեական սրբավայրերի պահպաններից մեկը:

Քարտեզագրությունը, որը սկսվեց մի քանի դեղյակ և շրջանակով, նկարված կալվե սալիկի կամ քանդակված սալաքարերի վրա, մինչև մեր

օրերը հասնելն անցել է երկար և արկածալի ճանապարհ: Այսօվա քարտեզը մարդկության ձեռքում կարևոր մի փաստաթուղթ է, և հետաքրքիր է իմանալ, թե մեր նախնիներն ինչպես էին դա ընկալում և դրա մասին ինչ կարծիք ունեին:

2. Սկզբնական շրջան

Հնագույն քարտեզը, որը մեզ է հասել բաբելոնյան կալվե սալիկների վրա փորագրված, հյուսիսային Միջագետքի քարտեզն է՝ պատրաստված մոտ մ.թ.ա. 3800 թ.: Դրանից հետո գալիս են հողամասերի սահմանների պլաններ, որոնք պատրաստվել են մոտ մ.թ.ա. 2300 թ. և օգտագործվել Սարգոն թագավորի կողմից հարկեր հավաքելու նպատակով:

Հնագույն աշխարհացույց քարտեզը բաբելոնյան կալվե մի սալիկ է՝ պատրաստված մոտ մ.թ.ա. 600 թ., որի վրա նշված է նաև Հայաստանը: Սա շրջանաձև մի քարտեզ է, որը նշում է Երկիրը որպես ծովերի մեջ լողացող սկավառակ, որի կենտրոնում Բաբելոնն է՝ շրջապատված երկու այլ երկրներով, որոնք կոչվում են Ասորեստան և Արմենիա (Ուրարտու)⁴: Այստեղ պատկերված է Եփրատը, որն, ակունք առնելով Հայաստանի լեռներից, անցնում է Բաբելոնի միջով, ապա Միջագետքի ճահճառաններով թափվում է Պարսից ծոցը: Ծովերը նշված են որպես

⁴ Այս կալվե սալիկը պահվում է Լոնդոնի բրիտանական թանգարանում:

«դառը ջրեր», իսկ աշխարհի շուրջը պատկերված են յոթ կղզիներ, որոնց մասին բացատրություններ կան սալիկի մյուս կողմում (տե՛ս քարտ. 1ա և 1բ):

Ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի, որը նաև ճանաչված աշխարհագրագետ էր և ապրում էր մ.թ.ա. 489–425 թվականներին, Միլեթացի Արիստագորասը Սպարտայում ցուցադրել էր երկաթյա սալիկի վրա իր փորագրած քարտեզը, որի օգնությամբ նա առաջարկում էր կազմակերպել արշավանք դեպի Պարսկաստան: Քարտեզի վրա նշված էին Իոնիան, Լիդիան, Փոյուգիան, Կիլիկիան, Կիպրոսը և, վերջապես, Հայաստանն ու Շոշ քաղաքը, որը Պարսից թագավորանիստ քաղաքն էր: Ըստ տրված բացատրությունների՝ քարտեզը պետք է լիներ Միջին Արևելքի, Իրանի և Հայաստանի տարածաշրջանը ցուցադրող մի քարտեզ (տե՛ս քարտ. 2):

3. Հույները, Ալեքսանդրիայի դպրոցը և Հայաստանը

Հայաստան անունը հիշատակվում է դեռ վաղ հունական շրջանի տարբեր փաստաթղթերում: Միլեթացի Անաքսիմանդրոսը (մ.թ.ա. 611–547 թթ.), որն ապրել է դասական Հունաստանի ժամանակաշրջանում, համարվում է քարտեզագրության հիմնադիրը: Նա առաջինն էր, որ պատրաստեց իր ճանաչած աշխարհի ընդհանուր քարտեզը: Հեկատեոսն ապրել է մ.թ.ա. 550–480 թվականներին և պատրաստել մի աշխարհացույց քարտեզ, որի համար նա օգտվել է Անաքսիմանդրոսի հիմունքներից: Բայց և այնպես, չնայած հնագույն գրականության մեջ առկա են շատ բացատրություններ տարբեր երկրների անունների, տեղանունների, ճանապարհների և քաղաքների մասին, մինչև ներկա օրերս դրանց ժամանակակից ոչ մի բնագիր քարտեզ մեզ չի հասել:

Հույն փիլիսոփա Պյութագորասն իր փիլիսոփայության դպրոցը հիմնել էր Կոլոնայում մ.թ.ա. 523 թ., որտեղ նա գրի է առել իր աստղագիտական, փիլիսոփայական, ֆիզիկական տեսություններն ու դիտողությունները, ներառյալ երկրագնդի գնդաձև լինելու տեսությունը, բայց մեզ հայտնի չէ, թե նա ինչպես է հանգել այդ եզրակացությանը:

Էրատոսթենեսը, որն ապրել է Պյութագորասից հետո՝ մ.թ.ա. 276–194 թվականներին, ընդունելով Երկրի գնդաձև լինելու տեսությունը, ավելացրեց, որ Երկիրը տիեզերքի կենտրոնն է, և բոլոր երկնային մարմինները պտտվում են նրա շուրջը: Նա իր ճանաչած աշխարհը հասարակածի միջոցով բաժանեց երկու մասի, իր պատկերածի վրա ավելացնելով երևակայական միջօրեական գծեր, որոնք, անցնելով երկրագնդի բևեռներով, ուղղահայաց կտրում էին հասարակածը: Սրանք քարտեզագրության մեջ մինչև այսօր գործածվող նույն միջօրեական գծերն են:

Էրատոսթենեսի տեսության համաձայն՝ բնակելի աշխարհը, որը հունարենով կոչվում էր օիկոմենե, բառացի՝ «բնակեցված» կամ «մարդաբնակ աշխարհ», կազմված է երեք մայրցամաքներից՝ Եվրոպա, Ասիա և Լիբիա (Աֆրիկա), որոնք շրջապատված են օվկիանոսով: Ճանաչված աշխարհի ծայրամասերն էին. արևելքում՝ Տապրոբանա կղզին (Յեյլոնը), արևմուտքում՝ Իսպանական Իբերիան, հյուսիսում՝ Տյուպե կղզին (Իսլանդիան) և հարավում՝ Կինամոնի կղզիները (տե՛ս քարտ. 3):

Էրատոսթենեսի ամենամեծ ներդրումը աշխարհագրության և քարտեզագրության ասպարեզներում նրա՝ երկրագնդի տրամագիծը չափելու հաշվարկն է: Հիմնվելով Ալեքսանդրիա և Սեյենե (Ասվան) քաղաքների հեռավորության վրա, որը հաշվվում էր 800 կիլոմետր, և ապա



չափերով երկու քաղաքներում ուղղահայաց տեղադրված միաշափ ձողերի կեսօրվա արևի գցած ստվերների երկարությունը՝ նա հաշվարկել է, որ երկու ուղղահայաց ձողերի կազմած անկյունը հավասար է ամբողջական շրջանի 1/50-րդ մասին: Հետևաբար, երկրագնդի շրջագիծը նա հաշվում է $50 \times 800 = 40000$ կիլոմետր: Այս թիվը զարմանալիորեն ճշգրիտ է (+/- 75 կմ), եթե չհաշվենք երկրագնդի մասնակի ձվաձև լինելու պարագան:

Աշխարհագրության հսկաներից մեկն է Ստրաբոնը՝ ծնված Պոնտոսի Ամասիա քաղաքում (մ.թ.ա. 63–24 թթ.): Նա կատարել է բազմաթիվ ճանապարհորդություններ և աշխատել Ալեքսանդրիայի հայտնի գրադարանում: Այս գրադարանը հիմնադրվել էր մ.թ.ա. երրորդ դարում եգիպտական Պտղոմեոս փարավոնների իշխանության օրոք: Գրադարանը պարունակում էր ավելի քան 490 000 ձեռագիր և դասական աշխարհում համարվում էր ամենամեծը⁵:

«Աշխարհագրական տեսություն» կամ էլ պարզապես «Աշխարհագրություն» գրքի գլուխներից մեկը հատկացված է Հայաստանին, որտեղ նա խոսում է Հայաստանի աշխարհագրության, պատմության և ժողովրդի մասին: Ստրաբոնի հատորները հասել են մեզ, բայց նրա գործածած աղբյուրների ձեռագրերը ոչնչացվել են Ալեքսանդրիայի գրադարանի հրդեհների ընթացքում⁶:

4. Պտղոմեոսը և Հայաստանը

Հին աշխարհի ամենանշանավոր քարտեզագետն ու աշխարհագրագետն էր ալեքսանդրիացի Կլավդիոս Պտղոմեոսը, որն ապրել է մոտ

90–168 թվականներին: Նա աստղագետ էր ու թվաբանագետ և այս նյութերի մասին ունի մեծ քանակությամբ աշխատություններ, բայց նրա կարևորագույն գործն է ութհատորանոց «Աշխարհագրությունը», որի տեքստը մեզ հասել է ամբողջությամբ: Այս աշխատության առաջին հատորի մեջ Պտղոմեոսը բացատրում է, թե ինչ ձևեր և ճանապարհներ կարելի է օգտագործել տիեզերքը և երկրագունդը ուսումնասիրելիս, և ինչպես որոշել տվյալ վայրի կոորդինատները: Նրա առաջարկած մեթոդներից մի մասը գործածվում է ընդհուպ մինչև այսօր:

Իր աշխատության յոթերորդ հատորի վերջում և ութերորդ հատորում Պտղոմեոսը բացատրություններ է տալիս քարտեզագրության և աշխարհամասերի ու երկրների սահմանների ու բաժանումների մասին: Մնացած հատորները հատկացված են ճանաչված աշխարհի ավելի քան 8000 վայրերի տեղանունների բացատրականներին ու կոորդինատներին: Սրանք բաժանված են գլուխների՝ ըստ երկրների: Ամեն գլխի սկզբում տրված է երկրի աշխարհագրական նկարագրությունը, կարևորագույն լեռների ու գետերի անունները, հարևան երկրների անունները, ապա երկրի կարևոր քաղաքների անուններն ու նրանց աշխարհագրական կոորդինատները: Քաղաքների տեղանունները տրված են ըստ իր ժամանակի հունական աղբյուրների և հաճախ տարբերվում են մեզ ծանոթ և ժամանակակից տեղանուններից:

Այս հատորներում Հայաստանին վերաբերող տեքստը, որը հինգերորդ հատորում է, բաժանված է երկու մասի: Փոքր Հայքի քաղաքների ցուցակը տրված է «Ասիայի առաջին քարտեզ» գլխում, որը պարունակում է 79 տեղանուն, որոնցից կարևորներն են Մելիտանան (Մալաթիան), Նիկոպոլիսը, Սատալան (Սատաղը) և Կոման: Մեծ Հայքի մասին գրված է «Ասիայի երրորդ

⁵ Գրադարանն առաջին անգամ հրդեհվել է մ.թ.ա. 47 թ., ապա մնացած ձեռագրերը վատել են Կեսար Ալիքսիսի գործերը 273 թ., իսկ գործը լրացրել է Խալիֆա Օմարը 642 թ.:

⁶ Անգլերեն թարգմանությունը՝ Ս. Համիլտոնի և Վ. Ֆալքոնիլի՝ հրատարակված Լոնդոնում 1856 թ.:

քարտեզ» գլխում, որտեղ տրված է 85 տեղանուն, որոնցից ամենակարևորներն են Արտաշատը, Արմավիրը, Տիգրանակերտը, Արշամաշատը և Տուշպան (Վանը) (տե՛ս քարտ. 16–18 և 23):

Պտղոմեոսի «Աշխարհագրության» վրա հիմնված քարտեզներում հյուսիսը վերևում էր, և քարտեզները հաճախ ունեին ղեպի ներս թեքված կողմեր: Ըստ «Աշխարհագրության» և դրան կից քարտեզների բացատրության՝ Պտղոմեոսը աշխարհը բաժանում է երեք մայրցամաքների՝ Ասիա, Եվրոպա և Աֆրիկա, որոնք իրենց հերթին բաժանված և ցուցադրվում են տարբեր քարտեզների վրա: Ըստ նրա՝ գրքին կից կան հետևյալ քարտեզները.

– Աշխարհացույց քարտեզը՝ շրջապատված տարբեր ուղղություններից փչող քամիներով, որը բաժանված է եղանակային գոտիների:

- Եվրոպան՝ ներկայացված 10 քարտեզով,
- Աֆրիկան՝ ներկայացված 4 քարտեզով,
- Ասիան՝ ներկայացված 12 քարտեզով:

Հայաստանի անունը առկա է այս քարտեզներից հինգում:

Պտղոմեոսի «Աշխարհագրությունը» քարտեզագրության և աշխարհագրության ասպարեզներում մի այնպիսի հսկայական կարևորություն ունեցող աշխատանք է, որը ստեղծման օրից 1200 տարի հետո՝ մինչև 14–15–րդ դարերը, ժամանակի քարտեզագետները իրենց առաջին ատլասները պատրաստելիս ավելի հիմնվում և վստահում էին այս աշխատությանը, քան իրենց ժամանակակից նավարկողներից ստացած նոր տեղեկություններին կամ էլ նրանց ձեռքով պատրաստված նոր ծովային քարտեզներին:

5. Միջնադարի հայկական քարտեզագրությունը

Հայերեն առաջին աշխարհագրական աշխատությունը «Աշխարհացույց»-ն է՝ գրված 591-ից մինչև 610 թ., որը որոշ գիտնականներ վերագրում են միջնադարյան պատմահայր Մովսես Խորենացուն⁷, իսկ մեծամասնության կարծիքով դրա հեղինակն է հայ թվաբանագետ և աշխարհագրագետ Անանիա Շիրակացին⁸: Այս աշխատության հիմքն է Պապուս Ալեքսանդրիացու տեքստը, որն իր հերթին հիմնված էր Պտղոմեոսի «Աշխարհագրության» վրա:

«Աշխարհացույցը», Պապուսի տեքստից բացի, ունի շատ ավելի և մանրակրկիտ տեղեկություններ և տվյալներ Հայաստանի, Պարսկաստանի և այլ հարակից երկրների մասին: Իրականում այս հավելյալ տեղեկությունները զբաղեցնում են աշխատության մեծագույն մասը: Գիրքը գրված է գրաբարով, թարգմանված է աշխարհաբար, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն և վերատպված է անգլերեն նախաբանով⁹: Գիրքն ունի երկու տարբերակ, որոնցից մեկն ավելի համառոտ է: Չնայած այն պարագային, որ գրքից մեզ են հասել մի քանի ձեռագրեր, ինչպես նաև տպագիր օրինակներ, ցավոք, դրանցից ոչ մեկում քարտեզ չկա:

Երևանի Մատենադարանում կան մի քանի միջնադարյան ձեռագրեր, որոնք պարունակում են շրջանաձև կամ ձվաձև եվրոպական T-O տարատեսակի քարտեզներ: Սրանք հիմնականում 13–16–րդ դարերի ձեռագրերում են հանդիպում, որոնց մեջ նկատելի է նաև իսլամական քարտեզագրության ազդեցությունը: Այս քարտեզները

⁷ Մովսես Խորենացին ապրել է 5-րդ դարում:

⁸ Անանիա Շիրակացին ապրել է 7-րդ դարում:

⁹ Պրոֆ. Ռոբերտ Հյուզեն, Դելմար, Նյու Յորք, 1995:



ներկայացնում են քարտեզագրության զարգացման մեկ այլ փուլ, որը մեզ է հասցրել մինչև 17-րդ դ. հայերեն քարտեզների տպագրությունը (տե՛ս քարտ. 14):

18-րդ դարում պատմական Հայաստանի առաջին քարտեզը փորագրվեց և պատրաստվեց Վենետիկի Սուրբ Ղազար միաբանությունում՝ հիմնվելով «Աշխարհացույցի» տվյալների վրա: Այս քարտեզը ներկայացնում է պատմական Հայաստանի տարածքը՝ նշելով նահանգների անունները և այլ աշխարհագրական մանրամասնություններ¹⁰:

6. Քրիստոնեական քարտեզագրությունը և Միջնադարը

Ինչպես սպասելի է, Հայաստանի անունը առկա է քրիստոնեական քարտեզագրության բոլոր տարբերակներում, քանի որ սա Փոքր Ասիայից դեպի արևելք ընկած ամենաարևելյան քրիստոնյա երկիրն էր: Քրիստոնեական քարտեզագրության մեջ Հայաստանը հաճախ պատկերվում է ըստ Հին Կտակարանի՝ Արարատով և Նոյյան տապանով: Քարտեզներից մի քանիսի մեջ Երկրային դրախտը՝ Եդեմը, Հայաստանի տարածքում է կամ էլ նրա անմիջական հարևանությամբ:

Երբ քրիստոնեությունը հաստատվեց արևմուտքում, և կրոնական գաղափարները սկսեցին իշխել, Հին Կտակարանի բացատրած աշխարհի ստեղծումը դարձավ անփոփոխելի մի «փաստ»: Այս իրողությունը պատճառ դարձավ, որ քարտեզագրությունն ու աշխարհագրությունը տուժեին՝ ընկնելով կրոնի պարտադրած սահմանների միջև, միաժամանակ կորցնելով առաջադիմության մի-

ջոցներն ու ձգտումը: Երկրորդ դարից մինչև 15-րդ դարը քրիստոնյա աշխարհի քարտեզագրության մեջ կա մի հսկայական վիհ, քանի որ մինչ այդ զարգացած գիտական տեսությունները մերժվեցին, և նոր կրոնական ու ավետարանական հիմունքներ ունեցող տեսությունները գրավեցին նրանց տեղը: Պտղոմեոսյան քարտեզներում արդեն իսկ նկատելի էր աշխարհի իրական քարտեզի նախագիծը, որը մեր այսօրվա քարտեզագրության հիմքն է, բայց միջնադարյան քրիստոնյա աշխարհի քարտեզներում, ընդհուպ մինչև 14-րդ դարը պատկերված երկրագունդը իրականությունից շատ տարբեր էր:

Քրիստոնեության նախնական շրջանում եկեղեցին ուշադրություն չէր դարձնում աշխարհագրության և քարտեզների վրա, բայց ամեն ինչ փոխվեց, երբ 6-րդ դարում Կողմա Անտիոքցին՝ հանրաժանով «Կողմա» անունով, սահմանեց եկեղեցու տեղագրությունը: Ըստ նրա՝ աշխարհը գնդաձևի փոխարեն դարձավ տափարակ քառանկյունի, որի մեջ երեք ցամաքամասերը շրջապատված էին օվկիանոսով: Սրան հաջորդեցին սելվիացի Իզադորի (մոտ 560–636 թթ.) T-O տեսակի, նաև այսպես կոչված՝ «վանական» քարտեզները, որոնք հրատարակվել են նրա «Էտիմոլոգիա» աշխատության մեջ: Հաջորդ հազարամյակի ընթացքում այս քարտեզը և դրա տարբերակները դարձան քրիստոնեական քարտեզագրության հիմքերը (տե՛ս քարտ. 10, 13, 15):

Կրոնական հիմունք ունեցող այս քարտեզները շատ պարզ էին ու անպաճույճ: Սրանք կոչվում էին Սաղմոսարանի քարտեզներ, նաև ճանաչված էին «T-O քարտեզ» անունով, որոնք երևան եկան միջնադարում: Այդ քարտեզները, եթե դրանց կարելի է այդպես անվանել, երկրագունդը պատկերում են որպես մի շրջանաձև սկավառակ (O տառը), որը ծովերով և գետերով

¹⁰ Ռուբեն Գայյան, Հայ քարտեզագրության պատմությունը, Երևան, «Զանգակ» հրատ., 2017, էջ 42:

բաժանված է երեք մասի՝ T տառի ձևով, այստեղից էլ այս քարտեզների T-0 անվանումը: Քարտեզներում արևելքը պատկերի վերևի կեսում է, որի վերին մասում առկա է Երկրային դրախտը՝ Եդեմը: T տառի ուղղահայաց գիծը Միջերկրական ծովն է, որը Եվրոպան բաժանում է Աֆրիկայից, հորիզոնական գծի ձախ կողմում Դոն, իսկ աջ կողմում՝ Նեղոս գետերն են, որոնք առանձնացնում են Ասիան մյուս մայրցամաքներից: Ուլթերորդ դարում իսպանացի Բենեդիկտյան վանական Բեատոա Լիբենացին ստեղծեց իր T-0 տեսակի ձվածիր քարտեզը, որն ավելի զարդարուն տեսք ուներ: Այս տեսակը որդեգրվեց շատերի կողմից, և այսպիսով հիմնադրվեց «Բեատոա» քարտեզների տարատեսակը (տե՛ս քարտ. 11):

7. Իսլամական քարտեզագրությունը և Հայաստանը

Այն ժամանակ, երբ արևմտյան քարտեզագետները պարտավորված էին մնալ կրոնի որոշած սահմանների միջև, արևելքում՝ Պարսկաստանում և արաբական աշխարհում, գիտնականներն ու ալքիմիկոսները շարունակում էին աշխատել կրոնական դոգմաներից զերծ պայմաններում: Չնայած միջնադարում արաբական կամ, ավելի ճշգրիտ է ասել, պարսկական գիտություններն ու բժշկությունն ապրում էին ծաղկուն շրջան, բայց քարտեզագրությունն ու աշխարհագրության առաջադիմությունը դանդաղեց 13–14-րդ դդ. և մյուս գիտություններին զուգահեռ առաջադիմություն չունեցավ:

Իսլամական քարտեզագրության մեջ իշխողն էր Բալխի դպրոցը, որն իր աշխարհացույց քարտեզների մեջ հիմնականում նշում է իսլամական երկրները, ինչպես նաև որոշ եվրոպական երկրներ, ինչպիսիք են Իսպանիան, Ֆրանսիան և Գերմանիան (տե՛ս քարտ. 7, 12, 23): Սակայն

դրանց երկրամասերի քարտեզները սահմանափակվում են միայն իսլամական երկրներով, որոնք տեղակայված են Պարսից ծոցի, Կասպից, Արաբական և Կարմիր ծովերի շրջանում, ինչպես նաև Արևելյան Միջերկրականում՝ շրջանցելով քրիստոնյա աշխարհը: Սրանց մեջ բացառություն է կազմում Հայաստանը, որը, լինելով իսլամական երկրների անմիջական հարևանությամբ, պատկերված է Բալխի դպրոցին պատկանող Կովկասի հարավային շրջանի քարտեզներում:

Իսլամական աշխարհի կարևոր քարտեզագետներից են պարսիկ Աբու Ասհադ իբն Մոհամմադ ալ-Ֆարսին, ճանաչված ալ-Իսթախրի անունով (մահացած 957 թ. շրջանում), Սադիդ Իսֆահանին, Զաքարիա ալ-Ղազվինին (1203–1283) և աշխարհագրագետ ու գիտնական, Պարսկաստանում բնակվող Աբու Ռեյհան Բիրունին (973–1048): Նա հայտնի էր իր մի քանի ճանապարհորդություններով, հատկապես դեպի Հնդկաստան, որոնց մասին շարադրել է բազմաթիվ գրքեր: Ավելի ուշ ժամանակներում հանրահայտ էր արաբ աշխարհագրագետ Իսմաիլ Աբուլֆեդան (1273–1332), որի ազդեցությունն իսլամական և օսմանյան աշխարհագրության մեջ անժխտելի է:

Իսլամական աշխարհագրական գրականությունը պարունակում է մանրամասն տեղեկություններ երկրների, քաղաքների, ժողովուրդների ու նրանց սովորությունների ու լեզուների մասին, հաճախ առանց համապատասխան քարտեզների: Ինչպես նշվեց, Հայաստանը, տեղակայված լինելով Պարսկաստանի Գիլան, Դեյլամ և Ատրպատական նահանգների հարևանությամբ, մշտապես տեղ է ունեցել իսլամական աշխարհագրական գրքերում ու քարտեզներում (տե՛ս քարտ. 8 և 9):

Իսլամական քարտեզագրության Արաբ-նորմանդական դարաշրջանում իսլամական քար-



տեղագրությունն ապրեց ավելի ծաղկուն ժամանակներ: Այս շրջանի ամենահայտնի արաբ քարտեզագետն է համարվում ալ-Իդրիսին (1099–1166)՝ ծնված Մարոկկոյում և կրթություն ստացած Իսպանիայում: Եվրոպայում և Ասիայում կատարած ճամփորդություններից հետո Իդրիսիի համբավը պատճառ դարձավ, որ Միցիլիայի Ռոջեր Երկրորդ թագավորը նրան հրավիրի աշխատելու իր արքունիքում: Թագավորի համար նա պատրաստել է հատուկ արծաթյա գլոբոս՝ քանդակված աշխարհի ժամանակակից քարտեզով: Նա հեղինակն է աշխարհագրական հանրագիտարանի, որին կից առկա էին Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի թվով 70 փոքրածավալ քարտեզներ: Քարտեզների օրինակներից մեզ հասել են մի քանի տարբերակներ, որոնք ցուցադրում են Իդրիսիի վարպետությունը որպես քարտեզագետ (տե՛ս քարտ. 12):

Օսմանյան աշխարհագրության կարևոր դեմքերից են Մեհմեթ Զիլլի իբն Դերվիշը՝ ճանաչված «Էվլիա Չելեբի» անունով (1611–1684, տիտղոսը նշանակում է Աստվածաշուք), ով ճանապարհորդել և գրել է իր տեսած երկրների և ժողովուրդների մասին, ինչպես նաև Քյաթիբ Չելեբին (1609–1657), ով օսմանյան կարևորագույն աշխարհագրագետն է: Քյաթիբ Չելեբին գրել է հանրահայտ «Ջիհան Նյումա»-ն (Աշխարհի հայելին), որի ձեռագիրը մնացել է անավարտ, սակայն, ունի մի քանի պարզ քարտեզ: Ծագումով հունգարացի, օսմանցի առաջին հրատարակիչ Իբրահիմ Մովթեֆերրիկան այդ գիրքը լրացրել է և հրատարակել՝ ներառելով շուրջ 40 քարտեզ: Նրա բոլոր քարտեզները հիմնված են Չելեբիի, ինչպես նաև եվրոպական ժամանակակից այլ քարտեզների վրա, որոնք պարունակում էին տեղեկություններ Հայաստանի մասին:

Այստեղ պետք է նաև նշել Կոստանդնուպոլսում ապրող հայագի Երեմիա Չելեբի Քէոմուրճեանին (1637–1695), ով օսմանյան պատմության ու աշխարհագրության մեջ ունեցել է շատ մեծ և կարևոր ներդրումներ (տե՛ս քարտ. 36):

8. Հայաստանը պորտոլան ծովային քարտեզներում

Ինչպես հիշվեց, պորտոլանները ծովագնացների համար պատրաստված քարտեզներ էին, և սպասելի չէր, որ Մեծ Հայքը (բուն Հայաստանը), լինելով ծով և նավահանգիստ չունեցող երկիր, հիշատակվի այս քարտեզներում: Ինչ վերաբերում է Կիլիկիո Հայկական թագավորությանը, ապա սրա նավահանգիստները և քաղաքները առկա են Արևելյան Միջերկրականի բոլոր պորտոլաններում:

Վաղ միջնադարյան շրջանում, երբ արևմտյան աշխարհագրագետներն ու քարտեզագետներն աշխատում էին իրենց գիտելիքներն ու տեսությունները համաձայնեցնել Սուրբ Գրքի թեև դրանքներին, նավաստիներն ու ծովագնացները զբաղված էին իրենց տեսած ծովերի և ափերի հետազոտությամբ ու դրանց գծագրությամբ: Այս ավանդությունների հիմքն էր ծառայում հույն ծովագնացների «պերիպլոսը», որը նշանակում է «ծովեզրերի և ափերի շուրջ կատարած ճանապարհորդությունների մատենագրություն»: Այս բառը իտալերենով թարգմանվում է «պորտոլան», և քանի որ սկզբնական շրջանում նման քարտեզները պատրաստվում էին հիմնականում իտալացի և կատալոնացի ծովագնացների ձեռքով, իտալերեն բառը գտավ ընդհանրացած գործածություն, և մինչև այսօր ծովային քարտեզները կոչվում են պորտոլան քարտեզներ կամ էլ պարզապես պորտոլաններ:

Պորտոլանները սովորաբար ծովափնյա քաղաքների, նավահանգիստների, գետաբերանների, ծոցերի, նեղուցների, ընդծովյա արգելքների ու ժայռերի և ափի մասին տալիս են մանրամասն տեղեկություններ՝ նշելով կողմնացույցի և իշխող քամիների ուղղությունները: Ծովագնացին հետաքրքրող որևէ տեղեկություն, որը կարող էր նավավարի կողմնորոշվելուն և նավարկելուն օժանդակել, տրվում է հնարավորինս մանրամասն: Իսկ ծովափից ներս ընկած վայրերի մասին քարտեզի վրա հաճախ ոչ մի տեղեկություն չի տրվում:

Խտալական պորտոլանները պատրաստվում էին հիմնականում Վենետիկում, ձենովայում և Անկոնայում: Սրանք սովորաբար Միջերկրական ծովի մեջ նավարկության համար պատրաստված քարտեզներ էին, իսկ կատալան քարտեզները, որոնք պատրաստվում էին Բարսելոնայում և Մալորբայում, երբեմն պարունակում էին տվյալներ մինչև Հնդկաստանի և Չինաստանի շրջանները՝ այսպիսով դառնալով ավելի աշխարհացույց քարտեզների նման: Այս քարտեզները նույնպես տալիս էին բավականին տեղեկություններ ծովից հեռու և ցամաքի ներսի մասերի վերաբերյալ, որոնք կարևոր էին հեռավոր երկրներ ճամփորդող առևտրականների ու հետազոտողների համար:

Պորտոլան քարտեզները, ինչպես նախկինում հռոմեական ճանապարհի քարտեզները, հույժ կարևոր փաստաթղթեր էին, որոնց առկայությունը կարող էր պատճառ դառնալ նավատորմի կամ բանակի վերջնական հաղթանակի հասնելու համար, հետևաբար բոլոր մրցակից պետություններն իրենց քարտեզները խստորեն հսկում էին ու գաղտնի պահում: Հռոմեական քարտեզները պահպանում էր կայսրը, իսկ, օրինակ, իսպանական պորտոլանները պահպանվում էին

Սևիլիայում՝ հատուկ ստորերկրյա պահեստներում: Ծով դուրս եկող նավատորմի նավապետերին տրվում էր միայն իրենց բռնած ճանապարհի պորտոլանի պատճենը: Ճամփորդության ընթացքում պորտոլանները պահպանվում էին նավապետի սենյակում՝ փակի տակ: Երբեմն քարտեզի տուփի մեջ դրվում էր ծանրություն, որպեսզի նավաբեկության կամ թշնամու նավ բարձրանալու դեպքում քարտեզի տուփը ծովը գցելիս խորտակվի և թշնամու ձեռքը չընկնի: Պորտոլանների մասին օտարին որևէ տեղեկություն բացահայտելը մահապատժի էր արժանանում: Այսուհանդերձ, բազում քարտեզագետներ հարստացան՝ մրցակիցներին վաճառելով գաղտնաբար պատճենահանված պորտոլանների օրինակները:

Միջերկրականի պորտոլանները տալիս են բավականին մանրամասն տեղեկություններ Փոքր Ասիայի ու Անատոլիայի Սևծովյա և Միջերկրականի ափերի մասին: Պետք է շեշտել, որ Միջերկրականի շրջանի խտալական և կատալան պորտոլանները ժամանակի համար անսպասելի ճշգրտությամբ են վերարտադրում ծովափերի մանրամասնությունները: Սրանց մեջ ակնառու տեղ են գրավում Հայկական Կիլիկիո ափերի մասին տրված տեղեկությունները, որոնք, լինելով քրիստոնեական երկրի ափեր, եվրոպական նավերի հանդեպ բարեկամական էին տրամադրված: Մեծ Հայքը ծովին ելք չունենալու պատճառով շատ պորտոլանների սահմաններից դուրս էր մնում, բայց որոշներն իրենց քարտեզի ծայրամասերին նշում են Հայաստանի անունը: Այն պորտոլանները, որոնք ընդգրկում են ավելի մեծ տարածքներ, իրենց ցուցադրած երկրների շարքում անպայման նշում են Հայաստանը (տե՛ս քարտ. 19, 19ա, 19բ, 20, 21, 21ա, 21բ):

Պորտոլաններում Հայաստանի ներկայությունը հավանաբար կարելի է բացատրել Եվրո-



պայտամ աշխատող հայ առևտրականներին՝ իրենց քրիստոնյա հայրենիքի մասին հաղորդած տեղեկությունների հիման վրա, որտեղ, ըստ նրանց, բիբլիական Արարատն է, և որն արևելքում տեղակայված՝ աշխարհի առաջին քրիստոնյա թագավորությունն էր:

9. Տասնհինգերորդ դարը

Տասնհինգերորդ դարի երկրորդ կեսին երկու կարևոր դեպքեր տեղի ունեցան, որոնք ազդեցիկ դեր խաղացին քարտեզագրության մեջ: Առաջինը Գոտտենբերգի տպագրական սարքի գյուտն էր, որն առիթ տվեց Պտղոմեոսի «Աշխարհագրության» տպագրությանը՝ սկսած 1477 թվականից: Մյուսը Ամերիկայի հայտնաբերումն էր՝ կատարված Կոլումբոսի կողմից:

Երբ թուրքական ցեղերը 1453-ին խուժեցին Կոստանդնուպոլիս, քաղաքի գրադարանից փախցրած կամ գողացած որոշ գրքեր սկսեցին երևան գալ Իտալիայում: Սրանցից մեկն էր Պտղոմեոսի «Աշխարհագրությունը», որն անմիջապես հունարեն բնագրից թարգմանվեց լատիներեն, և, ինչպես նախկինում ասվեց, բազմաթիվ քարտեզագետներ, դրանց շարքում Դոննոա Գերմանիոսը, Սեբաստիան Մյունստերը, Մարտին Վալդզեմյուլլերը, Բեոլինգերին և մի քանի ուրիշներ սկսեցին պատրաստել քարտեզներ՝ հիմնվելով Պտղոմեոսի տեքստերում տրված բացատրությունների, տեղանունների և դրանց կոորդինատների վրա: Քարտեզները սկսեցին երևան գալ առաջին հերթին ձեռագրերում, ապա նաև նոր լույս տեսնող տպագիր ատլասներում:

Հնում քարտեզները հիմնականում գծվում էին մագաղաթի վրա, բայց 13-րդ դարից սկսվեց նաև թղթի գործածությունը, որն աստիճանաբար դարձավ ընդունված հիմք: Նախքան տպագրության գյուտը բոլոր քարտեզները, ինչպես նաև

գրքերը ձեռագիր էին և բազմացվում էին գրիչների ձեռքով՝ արտագրելու ընթացքում թույլ տալով շատ սխալներ ու վրիպակներ: Այդ պատճառով էլ հաճախ նույն գրքի տարբեր օրինակների տեքստերը իրարից շատ քիչ էին տարբերվում, սակայն քարտեզների պարագայում այս տարբերությունը հաճախ շատ ակնառու էր:

Որոշ հատուկ ատլասներ և հատորներ պատրաստվում էին թագավորական ընտանիքների համար կամ նրանց պատվերով, որոնք, բնականաբար, կազմվում էին լավագույն և թանկագին կաշվով, ոսկեգօծ զարդարանքներով ու թագավորական զինանշաններով: Այսպիսի հատորների քարտեզները հատուկ ուշադրությամբ և ճաշակով ներկվում էին ճանաչված մասնագետների ձեռքերով:

10. 16-ից մինչև 18-րդ դարերը

Այս ժամանակաշրջանի քարտեզների յուրահատկություններից են դրանց ձևավորումը և ճոխ զարդարանքները: Քարտեզի անվանագրի շրջանակը՝ կարտուշը կամ ցուցատախտակը, որի նպատակն էր քարտեզի ցուցադրած շրջանը և քարտեզի հեղինակին ներկայացնելը, այս դարաշրջանում դարձել էին արվեստի գեղեցիկ աշխատանքներ, որոնք երբեմն զբաղեցնում էր քարտեզի շոշափելի, երբեմն էլ մեծ մասը: Զարդարուն կարտուշները առկա էին համարյա բոլոր քարտեզներում, ներառյալ նաև Հայաստանը ներկայացնող քարտեզներում (տե՛ս քարտ. 22):

Այլ զարդարանքներ սկսեցին նույնիսկ երևան գալ քարտեզների շրջանակներում: Քարտեզների շուրջը սկսեցին պատկերել տվյալ աշխարհամասի քաղաքների, ժողովրդի տարազների և բնության տեսարանների պատկերներ, որոնք շատ հաճախ իրականությանը բոլորովին չէին համապատասխանում, այլ տեղադրվում էին պար-

զապես որպես զարդարանք: Որոշ քարտեզներում կարելի է տեսնել հսկայական երևակայական տարազներ հագած կանանց ու տղամարդկանց, ինչպես նաև իրար շատ նմանվող քաղաքների ուրվագծեր: Մեզ են հասել քարտեզներ, որոնց վրայի զարդարանքները գերիշխում են բուն քարտեզի մեջ տրված տեղեկություններին՝ այսպիսով նվազեցնելով քարտեզի դերն ու կարևորությունը շրջանակի զարդարանքների համեմատությամբ:

Մինչև 16-րդ դարը քարտեզները հիմնականում գծագրվում էին ճամփորդներից, նավաստիներից, ծովագնացներից և ուխտավորներից հավաքած տեղեկությունների հիման վրա, բայց այս դարաշրջանում սկսեցին երևան գալ համեմատաբար ճշգրիտ և զարգացած քարտեզագրական սարքավորումներ, որոնք կարևոր դեր ունեցան քարտեզագրության զարգացման մեջ: Միաժամանակ սկսեցին նաև զարգանալ քարտեզագրության ու երկրաչափության մեջ կիրառված զարգացած և ավելի ճշգրիտ մեթոդներն ու գործելակերպը:

Նույնիսկ քրոնոմետրի և սեքստանտի գյուտերից հետո, որոնք առիթ տվեցին երկայնության ճշգրիտ հաշվարկմանը, մինչև 19-րդ դարի վերջերը ամեն երկիր իր հրատարակած քարտեզներում զրո աստիճանի միջօրեն ընտրում էր իր երկրի կարևոր քաղաքներից մեկով անցնողը: Միայն 1884 թվականին էր, որ միջազգային հանրությունը, համախմբվելով ԱՄՆ-ում, որոշեց Լոնդոնի մոտ տեղակայված Գրինվիչ քաղաքի աստղադիտարանի միջով անցնող միջօրեականն ընդունել որպես երկայնության զրո աստիճանը:

Ստորև տրված են 16-18-րդ դարերի կարևոր և հանրաճանաչ աշխարհագրագետներից և քարտեզագետներից մի քանիսի համառոտ կենսագրականները, որոնց ներգրումները քարտեզագրությունը դարձրել են զարգացած և ստույգ

գիտություն, և որոնք բոլորն էլ իրենց քարտեզներում նշել են Հայաստանը:

Գերմանացի քարտեզագետ Մարտին Վալդ-գեմյուլլերի (մոտ 1470–1518) կարևոր աշխատություններից է 12 թերթի վրա գծված աշխարհացույցը, որը նա կատարելագործել ու վերջնականացրել է 1507 թվականին, և որից մեզ է հասել միայն մեկ օրինակ¹¹: Այս քարտեզի վրա առաջին անգամ տպագրվել է Ամերիկա անվանումը: Նրա մյուս կարևոր աշխատանքն էր պտղոմեոսյան քարտեզը, որը նա պատրաստել էր նույն հեղինակի «Աշխարհագրություն» երկի հիման վրա:

Գերմանացի մաթեմատիկոս և լեզվաբան Սեբաստիան Մյունստերը (1489–1552), շարունակելով իր նախորդի՝ Վալդգեմյուլլերի աշխատանքը, 1544 թ. պատրաստեց պտղոմեոսյան «Աշխարհագրության» երկրորդ կարևոր հրատարակությունը, որը, բացի 27 քարտեզներից, ուներ նաև հանրագիտարանային տեղեկություններ ամբողջ երկրագնդի և նրանում ապրող ժողովուրդների մասին:

Ֆլամանդացի մաթեմատիկոս և ճշգրիտ սարքեր կառուցող Ջերարդուս Մերկատորը (1512–1594) նաև հայտնի է որպես կարևորագույն քարտեզագետներից մեկը: Նա իր առաջին գլոբուսը պատրաստել է 1541 թվականին, որի վրա ցուցադրված էին մանրամասն տեղեկություններ: Նրա գլոսն է «մերկատորյան (կամ գլանային) պրոյեկցիան», որն օգտագործելով՝ հնարավոր դարձավ երկրագունդը պատկերել տափարակ թղթի վրա: Նա երկրագունդը պատկերեց միջօրեականների և զուգահեռականներ

¹¹ Elizabeth Harris, "The Waldseemüller World Map: A Typographic Appraisal", *Imago Mundi*, Vol. 37 (1985), pp. 30-53.



րի ցանցի վրա՝ կազմված դրանց ուղղահայաց՝ իրար հատող գծերով:

Ֆլամանդացի մյուս հայտնի քարտեզագետն է Աբրահամ Օրտելիոսը (1528–1598): Նա մաթեմատիկոս էր ու լեզվաբան: Նրա կապը քարտեզագրության հետ սկսվեց քարտեզ ներկելով: 1571 թվականին նա հավաքեց 53 քարտեզ, որոնք փորագրել էր Ֆ. Հոգենբերգը, և հրատարակեց իր առաջին ատլասը, որը կոչվում էր «Երկրագնդի ամբողջ տարածքը»: Այս ատլասը տարբեր փոփոխություններով ու հրատարակություններով, երբեմն 115 կամ ավելի քարտեզներով տպագրվում էր մինչև 1612 թ. (տե՛ս քարտ. 25–27):

Հոլանդացի երկու հայտնի քարտեզագետներից են Վիլեմ Յանսոն Բյաուն (1571–1638) և նրա որդի Յոհաննը (1596–1673), որոնք հետևեցին ավանդությանը՝ սկսելով գիտություն և աստղագիտություն ուսումնասիրել նախքան Ամստերդամում ճշգրիտ սարքավորումների արտադրություն հիմնադրելը: Վերջինս իր հրատարակչական գործունեությունը սկսեց Մերկատորի ատլասով՝ աստիճանաբար դրան ավելացնելով նոր և արդիական քարտեզներ, զարգացնելով և կատարելագործելով ատլասը, ի վերջո հրատարակելով իր հանրահայտ «Մեծ ատլասը», որը պարունակում էր համարյա 600 քարտեզ և ավելի քան 3000 էջ բացատրություն (տե՛ս քարտ. 31):

Քրիստոֆեր Սաքստոնը (1542–1610) առաջին անգլիացի քարտեզագետներից էր, ով իր աշխատանքը սկսել էր՝ չափագրելով Անգլիայի նահանգները, որի համար նա Բրիտանիայի թագուհի Էլիզաբեթից հատուկ մենաշնորհի արտոնություն էր ստացել: Նրա ամենակարևոր աշխատանքը «Անգլիայի և Ուելսի ատլաս»-ն է, որը հրատարակվեց 1759 թ. և արժանացավ բազմաթիվ վերահրատարակությունների:

Անգլիացի ամենանշանավոր քարտեզագետն է Ջոն Սպիդը (1552–1629), որի անունը անմիջականորեն կապված է Անգլիայի նահանգային քարտեզների հետ: Այս քարտեզները պատրաստված են ու ներկված գեղեցիկ և ճաշակով՝ մանրամասն նշելով գյուղերն ու քաղաքները՝ շրջապատված նահանգի ազնվականների ընտանեկան զինանշաններով: Նրա քարտեզները մինչև 1700-ականները ունեին մեծ պահանջարկ: Սպիդի կարևորագույն գործերից են «Մեծ Բրիտանիայի տարածքը» 1661 թ. և «Աշխարհի հայտնի մասերի հետազոտությունները», առաջին հատորը՝ 1627 թ.:

Ֆրանսիայի քարտեզագիտության մեջ Նիկոլաս Անսոնը (1600–1667) և նրա որդիները համահավասար էին ֆլամանդացի Մերկատորի ընտանիքին: Այս ընտանիքն էր, որ դրեց արդի ֆրանսիական քարտեզագիտության հիմքը: Նա ստացավ «Թագավորական աշխարհագրագետի» տիտղոս և 1658 թ. հրատարակեց իր «Բոլոր աշխարհամասերի ընդհանուր քարտեզ» ատլասը (տե՛ս քարտ. 30):

Ֆրանսիացի Գիյոմ դե Լիլի (1675–1726) հայրն ու եղբայրը նույնպես քարտեզագետ էին: Նա շարունակեց Սանսոնի հետքերով և դարձավ «Թագավորի առաջին աշխարհագրագետը»: Դե Լիլի ընտանիքի գրչին են պատկանում բազմաթիվ ատլասներ, որոնցից կարելի է առանձնացնել «Աշխարհագրության ատլասը» և «Ռուսական ատլասը», որը Ռուսաստանի առաջին ծավալուն ատլասն էր՝ հրատարակված 1745 թ. Սանկտ Պետերբուրգում: Նրա ատլասներում կան Կովկասի և Հայաստանի շրջանի մի քանի մանրակրկիտ քարտեզների տարբերակներ (տե՛ս քարտ. 41):

11. Հայերեն քարտեզներ

Եթե «Աշխարհացոյցի» ամբողջական ձեռագիրը մեզ հասած լիներ, թերև, ըստ որոշ պատմաբանների, ունենայինք նաև առաջին հայերեն քարտեզը: Սակայն մեզ հասել են միայն «Աշխարհացոյցի» օրինակներն առանց քարտեզների, և մինչև 1991 թ. մեզ հասած հայերենով ամենահին քարտեզը համարվում էր Ամստերդամում 1695 թ. տպագրված Թովմաս Վանանդեցու «Համատարած աշխարհացոյց»-ը: Այս քարտեզում պատկերված են երկու կիսագնդերը, որտեղ Ամերիկան և Նոր Հոլանդիան (Ավստրալիան) գծված են ոչ ամբողջական: Քարտեզը ճոխ կերպով զարդարված է չորս եղանակների ու առասպելների տեսարաններով և այլ փորագրություններով, որոնք շատ բանով նմանվում են դրա ժամանակակից հոլանդական քարտեզներին (տե՛ս քարտ. 37):

1991 թ. Բոլոնիայի համալսարանում պատրաստվում էին քարտեզների ցուցահանդեսի, երբ պահեստում գտնվեց մի մեծ փաթեթ, որից դուրս եկավ 360 սմ երկարությամբ և 120 սմ լայնությամբ ձեռագիր գունավոր մի քարտեզ: Ցուցահանդեսի պատասխանատուները չէին հասկանում, թե քարտեզի գրվածքն ինչ լեզվով է, մինչև որ մեկը փաթեթի վրա նշմարեց «Armenia» բառը: Քանի որ հայագի Գաբրիելա Ուուհոնը համալսարանի Գրաբարի ամբիոնի վարիչն էր, քարտեզն անմիջապես ուղարկվեց նրան: Պրոֆ. Ուուհոնյանի զարմանքին չափ չկար, երբ տեսավ հայերենով պատրաստված այս հսկայական քարտեզը, որը ցուցադրում էր Արևելյան և Արևմտյան Հայաստանի և հարակից տարածքների կարևոր հայկական վանքերն ու եկեղեցիները, կաթողիկոսարանները և այլն՝ սկսած Արցախից մինչև Կոստանդնուպոլիս, ներառյալ Կիպրոսը, Երուսաղեմը և Արցախը: Քարտեզի վրա կային

մանրամասն տեղեկություններ Հայոց եկեղեցու և պատմության մասին, իսկ հիշատակարաններից մեկում նշված էր նրա պատրաստելու պատճառն ու նպատակը (տե՛ս քարտ. 36):

Հայկական քարտեզագրության մեջ մեծ դեր են ունեցել Վենետիկի Սբ. Ղազար Միաբանությունն ու նրանց տպարանը, որտեղ 18-րդ դարի վերջերից մինչև 20-րդ դարի կեսերը տպագրվում էին բազմաթիվ քարտեզներ հայերենով (տե՛ս Ճեմճեմյանի աշխատությունը՝ նշված գրականության բաժնում):

Այս ամբողջ ընթացքում Երևանի Մատենադարանում առկա էր 15-րդ դ. ձեռագրերի մի հավաքածու, որի մեջ տեղադրված է 13-14-րդ դդ. փոքրիկ մի բոլորակ: 12,5 սանտիմետր տրամագիծ ունեցող այս բոլորակը T-O տեսակի աշխարհացոյց քարտեզ է, որի կենտրոնում Երուսաղեմն է: Քարտեզը պատրաստված է Կաֆայում և իրականում մեզ հասած հնագույն հայերեն քարտեզն է: Իր ֆիզիկական փոքր չափի և պարզ կառուցվածքի պատճառով քարտեզը մինչև վերջերս չէր ստացել իր արժանի գնահատականը (տե՛ս քարտ. 14)¹²:

Քարտեզը, պատրաստված լինելով կրոնական հիմունքներով, նաև նարկայացնում է Մետաքսի ճանապարհի կարևոր երկրներն ու քաղաքները:

12. Քարտեզը 19-րդ դարից հետո

Այսօրվա մեր ունեցած քարտեզները շատ տարբեր են 15-րդ դարի առաջին տպագիր քարտեզներից, որոնք երկար ու խորզուբորդ ճանապարհ են անցել այս գագաթնակետին հասնելու համար:

¹² Skú Rouben Galichian, "A Medieval Armenian T-O Map", *Imago Mundi*, 2007, Vol 60/1, 86-92.



Սկսած 19-րդ դարի կեսերից՝ քարտեզներն աստիճանաբար դարձան ճշգրիտ և վստահելի, հետևաբար տարբեր հրատարակիչների տպագրած նույն աշխարհամասի քարտեզները սկսեցին օրեցօր դառնալ միանման: Այս քարտեզների տարբերությունները հիմնականում մնացին հին ու նոր տեղանունների և ցուցադրված մանրամասնությունների սահմաններում: Այսպիսի զարգացման հասնելը հնարավոր դարձավ բազմաթիվ աշխարհագրագետների ու քարտեզագետների միասնական ջանքերի ու քրտնաջան աշխատանքի և տեխնոլոգիայի զարգացման շնորհիվ:

Չնայած նրան, որ անգլիացի քարտեզագետ Սաքստոնն առաջինն էր, որ պատրաստեց Անգլիայի և Ուելսի նահանգների մանրամասն քարտեզները, սակայն առաջին մանրակրկիտ և ճշգրիտ քարտեզը, որը 1660 թ. քարտեզագրության մեջ ստանդարտ դարձած եռանկյունավորման մեթոդով պատրաստվեց, դա Քասսինիի Ֆրանսիայի քարտեզն էր:

19-րդ դարի կեսերին Եվրոպայի երկրների մեծ մասը չափազրված էր այս մեթոդով: Այսուհանդերձ, աշխարհի 90 տոկոսը դեռևս մնում էր չչափազրված կամ, ըստ քարտեզագրության տեղմիներ, որպես «անձանոթ երկրամաս»:

Եթե մեկը ցանկանար տարբեր մասնագետների գծած աշխարհի երկրների քարտեզներն իրար կից շարելով ստանալ աշխարհի քարտեզը, շատ խնդիրների կհանդիպեր: Դրանք հիմնականում հետևյալը կլինեին.

1. Ամեն երկիր պատրաստում էր իր քարտեզը՝ որպես զրոյական միջօրեական վերցնելով իր մայրաքաղաքը կամ կարևոր քաղաքներից մեկը:
2. Ամեն մի քարտեզագետ գործածում էր իր սեփական պայմանական նշանների

ընտանիքը: Այսպիսով՝ գործածվում էին ավելի քան 1000 խորհրդանիշեր:

3. Քարտեզների աստիճանաչափները (մասշտաբ) բազմաթիվ էին, և քարտեզներից ամեն մեկն ուներ իր տարբեր աստիճանաչափը:
4. Տեղանունները գրվում էին տարբեր այբուբեններով, հետևաբար հաճախ նույն վայրը տարբեր քարտեզներում կրում էր տարբեր անվանումներ:

Այս հսկա տարբերությունները շեշտակի զգալ էին տալիս միջազգային քարտեզագրության համար միատեսակ քաղաքականություն և աստիճանաչափ ստեղծելու կարիքը և Միջազգային աշխարհագրական կոնգրեսի հիմնադրումը:

Երկայնության չափման միջազգային ստանդարտը՝ մետրը, արդեն իսկ որդեգրվել էր Ֆրանսիայի կողմից, երբ 1798 թվականին Եվրոպայի երկրներից շատերը նույնպես ընդունեցին այս չափանիշը, սակայն դրա կիրառումը գիտնականների և կազմակերպությունների կողմից պահանջեց ավելի երկար ժամանակ նույնիսկ չափանիշի հիմնադիր երկրում՝ Ֆրանսիայում:

1884 թվականին Վաշինգտոնում կայացած «Առաջին միջազգային միջօրեականի համագումարը» քննարկեց և որոշեց ընդունել Լոնդոնին մոտ Գրինվիչ քաղաքի աստղադիտարանով անցնող միջօրեականը՝ որպես զրո սաստիճանի միջօրեական: Այս կոնֆերանսը նույնպես վավերացրեց ժամանակի և օրվա աստրոնոմիայի ներքին, որոնք պետք է գործածվեին բոլոր չափագրություններում:

Համաշխարհային քարտեզագրությունը որակապես նոր մակարդակի հասավ, երբ 1891 թվականին «Հինգերորդ միջազգային աշխարհագրական կոնգրեսը» որոշեց քարտեզագրության միջազգային կոմիտեի ստեղծումը:

րական համագումարը» վավերացրեց 1/1 000 000 աստիճանաչափով համաշխարհային քարտեզ պատրաստելու նախագիծը: Այս որոշումից հետո հնարավոր դարձավ մշակել ամբողջ աշխարհը ճշգրիտ չափագրելու ծրագիրը. մի աշխատանք, որը կարիք ունի խաղաղ պայմանների և անդամ երկրների համագործակցության. նախապայմաններ, որոնց հասնելը, սակայն, շատ հաճախ անհնար է լինում:

Քսաներորդ դարի երկրորդ կեսից սկսած՝ հաղորդակցության ու էլեկտրոնային տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը հասավ նրան, որ չափագրության համար սկսվեցին օգտագործվել արհեստական արբանյակները, որոնք անդադար պտույտներ են գործում երկրագնդի շուրջը: Սրանք մեզ հնարավորություն տվեցին

չափագրելու երկրագնդի նույնիսկ անհասանելի մասերը, ինչպիսիք են անապատները, լեռների կատարները և նույնիսկ օվկիանոսների հատակը: Այսօրվա լրտեսական արբանյակները կարող են հետևել ցանկացած անհատի շարժումներին և նրա գտնվելու վայրը որոշել մի քանի մետրի ճշգրտությամբ: Այս տեխնոլոգիայի զարգացման նպատակները ռազմական էին, սակայն մյուս արդյունաբերություններն էլ, օգտվելով այս գյուտերից և զարգացումներից, արագ թափով առաջ անցան: Արդյունքն այն եղավ, որ այսօրվա շուկաները լեցուն են ամեն տեսակի նորագույն էլեկտրոնիկայի, արբանյակային և կապի այլ սարքավորումներով, որոնք անհատին կարող են առաջնորդել դեպի ցանկացած վայր կամ հասցե:



ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ

Ադրբեջան կամ Ազերբայջան

Այժմ գոյություն ունի երկու Ադրբեջան: Մեկը Հայաստանի արևելքում և Կասպից ծովից արևմուտք ընկած Ադրբեջանի Հանրապետությունն է, որի տարածքն այս անունով է կոչվում սկսած 1918 թվականից: Մյուս Ադրբեջանը Պարսկաստանի հյուսիսարևմտյան հնագույն նահանգն է, որը նույն անունով կոչվել է ավելի քան երկու հազարամյակ: Այս երկրամասը նախկինում կոչվել է Փոքր Մարաստան (Lesser Media), որը Ջորալար Ատրպետի պատվին անվանվեց նրա անունով: Ադրբեջան անունը այս նահանգի ղեկավար զորավար Ատրպետի անվան տարբերակն է, որն իշխում էր մ.թ.ա. 321 թվականի շրջանում: Պարսկական Ադրբեջանն այժմ բաժանված է երեք մասի՝ Արևելյան և Արևմտյան Ադրբեջան նահանգների և Արդաբիլի նահանգի: Հայերեն՝ Ատրպատական:

Ադերբիզան, Ադրբիզան Ալեքսանդրիա

Տե՛ս Ադրբեջան:

Հնագույն քաղաք Եգիպտոսում, որը քաղաքակրթության կարևորագույն կենտրոններից է եղել: Այնտեղ էր դասական աշխարհի մեծագույն գրադարանը և աշխարհի հրաշալիքներից մեկը՝ Փարոսը: Արաբերեն՝ Իսքենդերիե:

Անատոլիա

Փոքր Ասիայի անվանումը: Հունարեն այս բառը նշանակում է «այնտեղ, որտեղից արևն է ծագում», այսինքն՝ Կոստանդնուպոլսից դեպի արևելքը:

Ադվանք կամ Առան

Հնագույն երկիր Կուր գետի և Կովկասյան լեռների միջև, որի մեծ մասն այսօրվա Ադրբեջանի Հանրապետության տարածքի մեջ է ընդգրկված: Պարսկերեն՝ Արրան կամ Առան, լատիներեն՝ Caucasian Albania:

Ատրպատական Արարատ

Պարսկաստանի Ադրբեջան/Ազերբայջան նահանգի հայերեն անվանումը:

Հայերի Սուրբ լեռը: Այնտեղ, ըստ Ատովածաշնչի, իջել է Նոյ նահապետի տապանը: Այժմ Թուրքիայի տարածքում է: Հայերեն անունն է Մասիս: Ունի երկու գագաթ՝ Մեծ Մասիս, որի բարձրությունը 5165 մետր է, և Փոքր Մասիս, որի բարձրությունը 3903 մետր է:

Արաքս կամ Արազ

Գեո Հայկական բարձրավանդակում: Այժմ Հայաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի սահմանն է: Կոչվում է նաև Երասիս: Պարսկերենով՝ Արաս:

Արձեշ կամ Արձիշ

Քաղաք Վանա լճի հյուսիսային ափին: Երբեմն Վանա լիճը այս քաղաքի անունով կոչվում է նաև Արձեշ: Առկա է նաև մեկ ուրիշ լիճ, որը կոչվում է Արձակ կամ Արձիշակ լիճ:

Արտաշատ	Հին Հայաստանի մայրաքաղաքներից: Հայաստանի Հանրապետության սահմաններում է:
Արտաքսատ կամ Արտաքսատու Տեն Արտաշատ:	
Արևելահայաստան	Մեծ Հայքի մի մասը, որը տեղակայված է Արարատից հյուսիս և հյուսիս-արևմուտք, որտեղ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքն է:
Արևմտահայաստան	Պատմական Հայաստանի և Հայկական բարձրավանդակի հիմնական մասը, որն Արարատի հարավարևմտյան կողմում է և հասնում է մինչև Փոքր Հայք: Այս շրջանը, որը հազարամյակներ բնակեցված է եղել հայերով, 1915–1923 թթ. ցեղասպանության հետևանքով հայաթափվել է, այժմ Թուրքիայի տարածքում է:
Արևելյան Անատոլիա	Թուրքիայում Հայկական բարձրավանդակին տրվող անունը, որն իրականում Անատոլիայից արևելք է և ոչ՝ Անատոլիայի արևելքում, քանի որ իրականում Անատոլիան միայն Փոքր Ասիա թերակղզու անվանումն է, ոչ թե, ըստ Աթաթուրքի, Թուրքիայի ամբողջ տարածքի անունը:
Բյուզանդիոն, Բյուզանդական կայսրություն	Հռոմի Արևելյան կայսրությունը, որը տիրում էր Անատոլիային, և որի մայրաքաղաքն էր Կոստանդնուպոլիսը՝ այսօրվա Ստամբուլը՝ հնագույն մշակութային կենտրոններից մեկը:
Դվին կամ Դաբիլ	Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքներից: Օսմաներեն և պարսկերեն կոչվում է նաև Դաբիլ:
Երևան կամ Էրեբունի	Հայաստանի հնագույն քաղաքներից, այսօրվա Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը: Հնագույն բնակավայրերից մեկը՝ հիմնադրված ուրարտական ժամանակներում՝ մոտ 2900 տարի առաջ: Ըստ Շարդանի՝ Պողոսմեոսի «Աշխարհագրություն» գրքում այս քաղաքը կոչվում էր Թերվա:
Եփրատ	Պատմական Հայաստանի և Ատվածաշնչի գետերից, որն ակունք է առնում Հայկական բարձրավանդակից և Քուրդիստանի ու Իրաքի միջով հոսում դեպի Պարսից ծոց՝ միանալով Տիգրիսին:
Էրիվան կամ Էրևան	Երևանի ռուսերեն և պարսկերեն անունները: Օսմանական գրականության մեջ երբեմն կոչվում է Բևան:
Թաքարեստանի ծով	Տեն Կասպից ծով:
Թալիշ	Պատմական շրջան, որի մեծ մասն այժմ Ադրբեջանի Հանրապետության տարածքում է, մյուս մասը՝ Իրանի տարածքում: Տեղացիները խոսում են հին պարսկերենի բարբառով:
Թուրքիա	Երկիր, որն այժմ գրավում է Փոքր Ասիայի տարածքը, ինչպես նաև դրանից արևելք ընկած Հայկական լեռնաշխարհը կամ բարձրավանդակը: Տեն նաև Օսմանյան կայսրություն:



Թուրքմանիա	Հայաստանին տրված անվանում, որը երբեմն գործածվում էր թուրքական աղբյուրներում, ինչպես նաև 17–18-րդ դարերում արևմտյան քարտեզագրությունում: Մի քանի տեղ Արևմտյան Հայաստանին տրվում էր այս անվանումը:
Իվերիա կամ Իբերիա	Այս գրքում՝ Կովկասյան Վիրքը: Պատմական երկրամաս, որն այժմ կազմում է Վրաստանի Հանրապետության մի մասը:
Կասպից ծով կամ լիճ	Աշխարհի ամենամեծ լիճը՝ տեղակայված Պարսկաստանի հյուսիսում և Կովկասի արևելքում: Հին անուններից է Հիրկանյան կամ Թաբարեստանի ծով: Պարսկերեն՝ Բահրե Խաճա՛ր:
Կիլիկիա	Աշխարհամաս Միջերկրականի հյուսիսարևելյան մասում, Անատոլիայի ծայրամասում և Իսկենդերուն–Ալեքսանդրետի ծոցի շրջանում: Այստեղ 12–14-րդ դարերում հիմնված էր Կիլիկիո Հայոց թագավորությունը:
Կողքիս, Կոլխիս կամ Կոլխիդա	Հնամենի երկիր, որը գտնվում էր Վրաստանի տարածքում: 2008 թ. հռչակվեց որպես Աբխազիայի անկախ հանրապետություն:
Կոստանդնուպոլիս	Բյուզանդիոնի մայրաքաղաքը, որը հնագույն մշակութային կենտրոններից է: Օսմանցիների կողմից գրավվելուց և Թուրքիայի հանրապետության օրոք վերանվանվել է Ստամբուլ կամ Իստանբուլ: Հայերեն կրճատված անվանումն է Պոլիս:
Հայաստան	Հնամենի երկիր, որն ընկած է Անատոլիայից արևելք և Կովկասյան լեռներից հարավ՝ մեծ մասամբ Հայկական բարձրավանդակում: Հայաստանը բաղկացած է երկու մասից՝ Մեծ Հայք և Փոքր Հայք: Մեծ Հայքի մեծ մասը Հայկական բարձրավանդակում է, ինչպես նաև դրա հյուսիս–արևելքում՝ այսօրվա Հայաստանում: Փոքր Հայքը Մեծ Հայքից արևմուտք է՝ Անատոլիայից անմիջապես արևելք: Հայաստանը նաև կոչվում է Արարատյան կամ Արարատի երկիր:
Հայկական բարձրավանդակ	Լեռնային աշխարհամաս, որի զգալի մասը այսօրվա Թուրքիայի տարածքում է, փոքր մասը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում: Տարածվում է մինչև Պարսկաստանի հյուսիս–արևմուտքը: Միջին բարձրությունը ծովի մակերևույթից 1000–ից մինչև 2000 մետր է, իսկ տարածքը՝ ավելի քան 300 000 քառ. կմ:
Հայկական Կիլիկիա	Հայկական թագավորություն՝ հիմնված Կիլիկիայի շրջանում: Երբեմն սխալմամբ կոչվում է Փոքր Հայք: Հայկական Կիլիկիայի թագավորությունը հիմնվել է տասնմեկերորդ դարում և գոյատևել շուրջ 300 տարի:
Հիրկանյան ծով	Տե՛ս Կասպից ծով:
Մասիս	Տե՛ս Արարատ:
Մարաստան կամ Մարերի երկիր	Կայսրություն, որը կազմակերպվել է առաջին դարում այսօրվա Պարսկաստանի արևմտյան շրջանում: Ժամանակի հզոր պետություններից մեկը, որը միացել է Պարթևական կայսրությանը:
Մեծ Հայք	Տե՛ս Հայաստան:

Շիրվան կամ Շերվան	Պատմական երկրամաս, որն այժմ մտնում է Ադրբեջանի Հանրապետության տարածքի մեջ:
Պարթևաստան	Հին Պարսկաստանի անվանումը, այժմ՝ Իրան:
Պնոտոս	Տեն Սև ծով:
Սուրբ Ղազար, Սան Լազարո	Կղզի Վենետիկի ավազանում, որտեղ հաստատված է Վենետիկի Միխթարյան միաբանությունը: Միաբանության տպարանը հայկական հնագույն տպարաններից է, որտեղ տպագրվել են բազմաթիվ գրքեր և քարտեզներ՝ սկսած 18-րդ դարից: Ունի ձեռագրերի և գրքերի մեծ հավաքածու և թանգարան:
Ստամբուլ	Տեն Կոստանդնուպոլիս:
Սև ծով (թուրքերեն՝ Կարա Դենիզ)	Ծով Անատոլիայից հյուսիս: Տեղակայված է Ռուսաստանի և Ուկրաինայի հարավում:
Վան	Պատմական Հայաստանի մայրաքաղաքներից, Վանա լճի մոտ: Ճանաչված է նաև Տոսպ և Տոչպա կամ Տուչպա անուններով:
Վրաստան	Հայաստանի հյուսիսային սահմանում տեղակայված երկիր: Կազմված է պատմական Վիրք, Մեգրելիա, Կոլխիս և այլ հին երկրամասերից:
Տիգրանակերտ	Պատմական Հայաստանի մայրաքաղաքներից մեկը, այժմյան Սիրվան քաղաքի մոտ, որը Թուրքիայում է: Նույն անունով քաղաքներ կան նաև Արցախում և այլուր:
Տիգրիս	Պատմական Հայաստանի և Աստվածաշնչյան գետերից, որն ակունք է առնում Հայկական բարձրավանդակում և Քուրդիստանի ու Իրաքի միջով հոսում դեպի Պարսից ծոց:
Տուչպա կամ Տոսպ	Տեն Վան:
Բևան	Տեն Երևան:
Ուրարտու	Պատմական թագավորություն, որը եղել է Հայկական բարձրավանդակում: Բաբելոնցիներն այս երկիրը կոչում էին Ուրարտու, իսկ պարսիկներն ու իլամները՝ Արմինիյա և Հերմինոյա:
Փոքր Ասիա	Աշխարհագրական երկրամաս և թերակղզի, որը Միջերկրական և Սև ծովերի միջև է: Նաև կոչվում է Անատոլիա:
Փոքր Հայք	Տեն Հայաստան:
Օսնանյան կայսրություն	11-րդ դարում Փոքր Ասիայի տարածքը ներխուժած սելջուկ թուրքերի կայսրությանը հաջորդողը: Այս կայսրությունը հիմնվեց 14-րդ դարում՝ տարածվելով Բուրսայից և գրավելով մեծ տարածք՝ մինչև Բալկանյան թերակղզի:



ՎԵՐԱՏՊՎԱԾ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՑԱՆԿ

Քարտեր	Անվանումը	Քարտեզագիրը	Ժամանակաշրջանը	Աղբյուրը
1	Աշխարհացույց	Բաբելոնյան սալիկ	մոտ մ. թ. ա 600 թ.	BM
1ա	Աշխարհացույց	Թարգմանություն	- -	
2	Աշխարհացույց	Հերոդոտոս	մ. թ. ա 440 թ.	Pr
3	Աշխարհացույց	Էրատոսթենես	մ. թ. ա 200 թ.	Pr
4	Աշխարհացույց	Մակրոբիոս	4-5-րդ դ.	Pr
5	Աշխարհացույց	Ռավեննա	7-րդ դ.	Pr
6	Աշխարհացույց	Զերոմ	420 թ.	BL
6ա	Հատված 6-րդ քարտեզից	Զերոմ	420 թ.	BL
7	Աշխարհացույց	ալ-Իսթախրի	950 թ.	BL
8	Առան, Աղրբեջան և Հայաստան	ալ-Իսթախրի	950 թ.	Թեհրան
9	Առան, Աղրբեջան և Հայաստան	Իբն Հաուբալ	985 թ.	Թոհկափի թանգ.
10	Աշխարհացույց	Իսիդոր եպ.	11-րդ դ.	Մյունխենի գր.
11	Աշխարհացույց	Բեատոս	12-րդ դ.	Օսնայի գր.
12	Աշխարհացույց	ալ-Իդրիսի	1154 թ.	Pr
13	Աշխարհացույց	Իսիդոր եպ.	12-րդ դ.	Մեծանի գր.
14	Աշխարհացույց	Անանուն	13-14-րդ դ.	Մատենադարան
15	T-O Աշխարհացույց	Սաղմոսարան	1250 թ.	BL
15ա	Հատված 15-րդ քարտեզից	Սաղմոսարան	1250 թ.	BL
16	Աշխարհացույց	Պողոմեոս	1513 թ.	BL
16ա	Հատված 16-րդ քարտեզից	Պողոմեոս	1513 թ.	BL
17	Հայաստանը, Վիրքը և այլն	Պողոմեոս	1482 թ.	BL
18	Փոքր Ասիայի նոր քարտեզ	Պողոմեոս	1513 թ.	BL
19	Պորտոլան քարտեզ	Դուլսերտ	1339 թ.	BNP
19ա, բ	Հատվածներ 19-րդ քարտեզից	Դուլսերտ	1339 թ.	BNP
20	Պորտոլան առլասից հատված	Աբրահամ Կրեսկ	1375 թ.	BNP
21	Պորտոլան քարտեզ	Վիլադեատես	1413 թ.	BNP
21ա, բ	Հատվածներ 21-րդ քարտեզից	Վիլադեատես	1413 թ.	BNP

22	Պլանիսֆերա	Դեսեյիե	1550 թ.	BL
22 u	Հատված 22-րդ քարտեզից	Դեսեյիե	1550 թ.	BL
23	Ասիայի երրորդ քարտեզը	Մերկատոր-Հոնդիուս	1578 թ.	Pr
24	Աշխարհացոյց	ալ-Դազվինի	1580 թ.	Ուալտերգ գալ.
25	Ալեքսանդրի գրաված երկրները	Օրտելիոս	1595 թ.	BL
26	Երկրագնդի տեսքը	Օրտելիոս	1598 թ.	BL
26 u	Հատված 26-րդ քարտեզից	Օրտելիոս	1598 թ.	BL
27	Թուրքական կայսրություն	Մերկատոր	1619 թ.	BL
28	Հայաստան	Դե լա Ռյու	1653 թ.	Pr
29	Վանի քարտեզը և պատմական տեքստ	Քյաթիր Չելեբի	1657 թ.	BL
30	Մեծ Հայք	Սանսոն	1658 թ.	Pr
31	Թուրքական կայսրություն	Բլաու	1664 թ.	Pr
32	Իրան, Հայաստան և Անատոլիա	Դե Վիտ	1670 թ.	Pr
33	Հայաստան, Վրաստան և Արևմտահայք	Մորդեն	1680/1688 թ.	Pr
34	Վրաստան և Հայաստան	Մալլետ	1683 թ.	Pr
35	Հայաստան, Սիրիա և Միջագետք	Քյովերիոս	1683 թ.	Pr
36	Հայաստանի եկեղեցիներն ու վանքերը	Քեմնորձեան	1691 թ.	Բոլոնիայի համ.
36 u	Հատված 36-րդ քարտեզից	Քեմնորձեան	1691 թ.	Բոլոնիայի համ.
37	Համառարած աշխարհացոյց	Վանսնդեցի	1695 թ.	Մասենդարան
38	5-րդ դարի պատմական իրավիճակը	Կոհլեր	1718 թ.	BL
39	Հայաստան	Կոհլեր	1718 թ.	Pr
40	Ասիական Թուրքիա և Փոքր Ասիա	Մոլլ	1729 թ.	Pr
41	Կասպից ծովի քարտեզը	Դե Լիլ	1730 թ.	Pr
42	Թուրքական կայսրություն	Հոմանն	1737 թ.	BL
42 u	Հատված 42-րդ քարտեզից	Հոմանն	1737 թ.	BL
43	Հնագույն Հայաստանն ու Վրաստանը	Բելլին	1764 թ.	Pr
44	Երկրային Դրահտը	Բոուեն	1780 թ.	Pr
45	Սուրբերի պատմությունը	Բաուշ	1783 թ.	Pr
46	Օսմանյան կայսրություն	Սք Ղազար	1787 թ.	BL
47	Ասիական Թուրքիա	Սանկտ Պետերբուրգ	1793 թ.	Pr
47 u	Հատված 47-րդ քարտեզից	Սանկտ Պետերբուրգ	1793 թ.	Pr
48	Աշխարհը հնագույն ժամանակներում	Վուգոնդի	1762 թ.	Pr
49	Ասիական Թուրքիա	Ռահֆ	1803 թ.	BL
50	Փոքր Ասիա և Հայաստան	Մալոն Բրյուն	1812 թ.	Pr
51	Հնագույն Պարսկաստանը	Դոուեր	1850 թ.	Pr
52	Հայաստանը	Քրրզոն	1854 թ.	Pr
53	Կովկաս և Հայաստան	Ուելլեր	1858 թ.	Pr
54	Հայաստան, Միջագետք և այլն	Սպրուներ	1865 թ.	Pr




55	<i>Թուրքիա</i>	<i>Ստամբուլ</i>	1867 թ.	BL
56	<i>Թուրքիայի Ռազմական քարտեզ</i>	<i>Ռազմ. նախարար.</i>	1877 թ.	Pr
57	<i>Միջին արևելքը հին դարերում</i>	<i>Հիլմի</i>	191? թ.	Pr
57 ա	<i>57-րդ քարտեզի թարգմանությունը</i>	<i>Հիլմի</i>	191? թ.	Pr
58	<i>Հայաստանի սահմաններն ըստ Սևրի</i>	<i>Նախագահ Վիլսոն</i>	1920 թ.	LOC
59	<i>Ասիայի նոր երկրները</i>	<i>Քրամբի ատլաս</i>	1920 թ.	Pr
60	<i>Հայաստանի Խորհրդային Սոց. Հանր.</i>	<i>Էլիբեկյան</i>	1928 թ.	Pr
61	<i>Կովկասի հարավն այսօրվա վիճակով</i>	<i>Հայ. ճարտ. ուսումն.</i>	2012 թ.	-

Համառոտագրություն

BL	<i>Բրիտանական գրադարան, Լոնդոն</i>
BM	<i>Բրիտանական թանգարան, Լոնդոն</i>
BNP	<i>Ֆրանսիայի ազգային գրադարան, Փարիզ</i>
JR	<i>Ջոն Ռայլանդ գրադարան, Մանչեսթերի համալսարան</i>
LOC	<i>Վաշինգտոն, Կոնգրեսի գրադարան</i>
Pr.	<i>Հեղինակի մասնավոր հավաքածու, այժմ՝ Մատենադարանում</i>

ՔԱՐՏԵԶՆԵՐ
ԵՎ
ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Քարտեզ 1ա

Քարտեզ 1/1ա. Մ.թ.ա. 6-րդ դարի բաբելոնյան այս կավե սալիկը մեզ հասած հնագույն աշխարհացույց քարտեզն է: Քարտեզը ցույց է տալիս աշխարհը սկավառակի ձևով՝ շրջապատված «դառը» ջրերով, որոնց մեջ կան յոթ կղզիներ: Աշխարհի կենտրոնում նշված է Բաբելոնը, որի մոտ նաև պատկերված են Ասորեստանը և Հայաստան-Ուրարտուն: Փոքր շրջաններով պատկերված են նաև յոթ այլ քաղաքներ, որոնցից են Հարրանը և Դերին: Հոտմեացիները Հարրանին կոչում էին Քարրահա, իսկ քրիստոնյա հայերը նրան կոչեցին Հելիոպոլիս (հերետիկոսների քաղաք), որն այժմ Հյուսիսային Միջագետքում է: Բիթ Զակինու կոչվող մասը Իրաքի ճահճոտներն են: Եփրատ գետը՝ ակունք առնելով Հայաստանի լեռներից, անցնում է Բաբելոնի և ճահճների միջով և հասնում Պարսից ծոց:


Սալիկի հետևում եղած տեքստի մեջ գրված է աշխարհը շրջապատող ծովերում եղած յոթ կղզիների և այնտեղ ապրող արտասովոր արարածների մասին: Կղզիները պատկերված են եռանկյունիներով, որոնցից մեծ մասը վնասված են և անընթեռնելի:

Հայաստանի անունը հայտնվել է բազմաթիվ հնագրության պատմական տեքստերում: Պարսից արքայից արքա Դարեհ Մեծը մ.թ.ա. 517 թ. Հայաստան անունը նշել է իր հանրահայտ Բեհիսթունյան սեպագիր արձանագրությունների վրա:

Իր եռալեզու արձանագրության մեջ նշված է, որ մ.թ.ա. 521 թ. նա իր հայ գորավար Դողարշին ուղակել էր հարևան Հայաստան՝ վերահասու լինելու այնտեղի դեպքերին: Նույն տեքստում Հայաստանի անունը էլամերեն նշված է որպես «Հարմինույա», հին պարսկերենով՝ «Արմինիյա», և բաբելոնյան սեպագրով՝ «Ուրաշտու» կամ «Ուրարտու»:

Մյուս գծագրության մեջ (քարտ. 1ա) տրված է սալիկի քարտեզի գրվածքների անգլերեն բացատրությունը: Տե՛ս Ungler, 1937:

Չափերը՝ 8x12,5 սմ: Բրիտանական թանգարան, Լոնդոն, Ant. Ref. 92687:




Քարտեզ 2. Աշխարհի քարտեզն ըստ Հերոդոտոսի (մ.թ.ա. 5-րդ դ.), որը վերագծել է Չարլզ Մյուլլերը՝ հրատարակված Սմիթի Ատլասում: Քարտեզը վերագծվել է ըստ Հերոդոտոսի բացատրությունների: Ժամանակին գոյություն ունեցող երկրների շարքում այս քարտեզի կենտրոնում նշված է Հայաստանը:

Տարածաշրջանի մյուս երկրներն էլ անվանված են Պարթևաստանը (Իրանը), Մարաստանը և Կողքիս-Աբխազիան: Բացակա են Ադրբեջանն ու Ադվանքը:

Սմիթի Ատլաս, Լոնդոն, 1874 թ.:

Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG210, այժմ՝ Մատենադարանում:





Քարտեզ 3. Աշխարհացոյցի այս վերակառուցումը հիմնված է Էրատոսթենեսի (մ.թ.ա. մոտ 276–194 թթ.) աշխատությունների վրա, ով, ընդունելով աշխարհի գնդաձև լինելը, կարողացավ ճշգրիտ չափել դրա շրջագիծը և պատրաստեց իր ճանաչած բնակելի աշխարհի քարտեզը: Ժամանակին գոյություն ունեցող երկրների շարքին այս քարտեզի կենտրոնում նշված է Հայաստանը:

Այս վերակառուցումը կատարել է գերմանացի քարտեզագետ ֆոն Սպրուները:

Չափերը՝ 18x11 սմ: Ֆոն Սպրուներ, Հնագույն աշխարհ, 1855:

Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG126, այժմ՝ Մատենադարանում:



Della grandezza della terra, come da gli antichi, e moderni sia misurata. Cap. XI.

Քարտեզ 4. Չորրորդ դարի հոմեացի պատմաբան և գրող Ամբրոզիոս Մակրոբիոսի Աշխարհացույց քարտեզը՝ վերցված նրա «Սկիպիոնի երազ» աշխատությունից:

Պուբլիոս Կոննելիոս Սկիպիոն Ավազը (մ.թ.ա. 235–183 թթ., ճանաչված որպես Աֆրիկացի) և նրա թոռը՝ նույն անունը կրող Սկիպիոն Կրտսերը (մ.թ.ա. 185–129 թթ.) հոմեացի զինավորականներ ու զիվանագետներ էին: Սկիպիոնի տեսած երազում մեծ հայրը՝ Սկիպիոն Ավազը, նրան բարձրացնում տանում է երկիրք ու այնտեղից երկրագունդը ցույց տալով՝ ասում.

Տես, թե ինչպես են տարբեր եղանակների գոտիները շերտավորում երկրագունդը: Սրանցից երկու միմյանցից ամենահեռուներին, որոնք երկրագնդի հակառակ բևեռներում են, տրվել է սառնամանիք և ցուրտ եղանակ, մինչդեռ կենտրոնական գոտին կիզված է արեգակի ճառագայթներից: Այս բևեռային և կենտրոնական գոտիների միջև գտնվող երկու գոտիներն են, որոնք բնակելի են.....

Նման եղանակային գոտիների բաժանված քարտեզները ժամանակին ընդունված էին: Երկրագունդը հաճախ բաժանվում էր 5 եղանակային գոտիների, որոնցից 1-ն ու 5-ը՝ ցրտի, իսկ 3-ը՝ անտանելի տոթի պատճառով բնակելի չէին: Բնակվելու հարմար գոտիները 2-ը և 4-ն էին, որոնցից միայն մեկն էր բնակելի: Երբեմն էլ երկրագունդը բաժանվում էր 7 կամ 9 եղանակային գոտու:

Քարտեզում վերից երկրորդը բնակեցված աշխարհն է, որտեղ արևեքն աջում է: Այգտեղ ձախից նշված երկրներն մեջ կարելի է տեսնել Բրիտանիան, Իսպանիան, Եթովպիան, Իտալիան, Արմենիան և Հնդկաստանը:

Չափերը՝ 6,5x6,4 սմ: Տպված է 1528-ին Իտալիայում:

Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG145, այժմ՝ Մատենադարանում:







Քարտեզ 5. Յոթերորդ դարի կեսերին ռավեննացի մի վանական, տարբեր աղբյուրներից հավաքելով նյութեր, շարադրել է աշխարհագրության մի գիրք: Գրքի բացատրությունների հիման վրա Կոնրադ Միլլերի վերագծած այս քարտեզը պատկանում է T-O ընտանիքի ճոխ տեսակին: Քարտեզն ուղղորդված է արևելքով վեր: Բնակելի աշխարհը շրջապատված է Հյուսիսային, Հարավային, Արևելյան և Արևմտյան օվկիանոսներով՝ կենտրոնում ունենալով ցամաքամասերը միմյանցից բաժանող Միջերկրական ծովը և գետերը:

Ըստ գոյություն ունեցող ավանդույթի՝ այստեղ էլ Կասպից ծովը պատկերված է իբրև Հյուսիսային օվկիանոսին միացած մի ծովածոց, իսկ Պարսից ու Արաբական ծոցերը միանում են Կարմիր ծովին, որն ինքը Հարավային օվկիանոսից է ճյուղավորվում: Կասպից ծովի շրջանում նշված են Վիրքը (Իբերիան), Աղվանքը (Ալբանիան) և Կասպիան, իսկ Կասպից լեռները սկսվում են ծովից ու հասնում մինչև Կովկասյան լեռներ: Արաքս և Կուր գետերը, որոնք նախքան Կասպից ծով հասնելը միանում են, այստեղ պատկերված են որպես մինչև ծովը հասնող երկու առանձին գետեր:

Աղվանքը տեղադրված է Կասպից ծովի հարավ-արևմուտքում՝ Հայաստանի մոտ, և Հայաստանից բաժանվում է Կովկասյան լեռներով: Վիրքը Աղվանքի հյուսիս-արևմուտքում է՝ Կասպից ծովի և լեռների մոտ (Կասպից լեռները նույն Կովկասյան լեռների այլ անվանումն է): Կողքիսը տեղադրված է Սև ծովի հյուսիսարևելյան ափին:

Քարտեզում Հայաստանը պատկերված է Կասպից ծովից հարավ-արևմուտք և Միջագետքից հյուսիս: Եփրատի և Տիգրիսի ակունքներն են Հայկական (Տավրոսյան) լեռները: Հայաստանի հարակից շրջաններն են Վիրքը, Աղվանքը, Հիրկանիան, Մեծ Մարաստանը, Պարթևաստանը, Ասորեստանը, Սիրիան, Կիլիկիան և Քաղզեան:





Քարտեզ 6ա


Քարտեզ 6/6ա. Զերոսի «Ասիայի քարտեզը» պատրաստված է 420 թվականի շրջանում, բայց մեզ է հասել միայն դրա 12-րդ դարի պատճենը: Քարտեզն ուղղորդված է հյուսիսով դեպի ձախ: Կիսաբոլորականները ներկայացնում են լեռները, իսկ գետերը պատկերված են զուգահեռ զույգ գծերով: Հերոնիմոսը, որը ճանաչված է նաև որպես Սուրբ Զերոս (348–420 թթ.), Սուրբ գրքի մեկնաբաններից էր: Նա Կեսարիայի Յուզեբիոս Եպիսկոպոսի (260–340 թթ.) «Օնոմաստիկոն» աշխատության թարգմանության մեջ ներառել է նաև այս քարտեզը: Այստեղ նշված են Սուրբ Գրքի մեջ հիշատակված վայրերն ու անունները:

Սև ծովը քարտեզի ստորին ձախ կողմում է, իսկ Կասպից ծովը՝ ձախ կողմի համարյա կենտրոնում: Քարտեզի վերը Հնդկական օվկիանոսն է, իսկ ներքևում՝ Հունաստանը: Մյուս երկրներից նշված են Հայաստանը, Բաբելոնը, Պարսկաստանը, Սիրիան և Խարթան: Այստեղ Հայաստանը Սև և Կասպից ծովերի միջև է, իսկ Հայաստանի դարպասները (armenie pile) լեռներ են, որոնցից ակունք են առնում մի կողմից՝ Արաքսը, իսկ մյուս կողմից՝ Տիգրիսը:

Դարպասների ներքևում պատկերված է Նոյյան տապանը՝ իջած մեկ ուրիշ լեռան վրա, որի աջ կողմում Մեծ Հայքն է՝ armenia superior, իսկ ներքևում՝ Փոքր Հայքը՝ armenia inferior: Հայաստանի տարածքում են Էդեսսա, Սամոսատա, Խարհա և այլ քաղաքներ: Հայաստանի հարևան երկրներն են Իբերիան (Վիրքը), Պարթևաստանը, Կոլխիսը, Ադիանքը, իսկ Ատրպատականը (այստեղ՝ Ադիաբենե), որը Արաքսի հարավային ափերին է, Հայաստանից հարավ-արևելք:

Քարտեզ 6ա-ում կարելի է տեսնել Հայաստանի շրջանի մանրամասնությունները:

Չափերը՝ 24x36 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Additional MS 10049, fol. 64:



աշխարհացույց քարտեզից, ընդհանրապես նաև պարունակում են 18–20 քարտեզ իսլամական երկրամասերից, որոնց մեջ են Իրաքը, Միջագետքը, Եգիպտոսը, Հյուսիսային Աֆրիկան, Պարսից ծոցը, Քիրմանը, Խորասանը, Ֆարսը, Սահաստանը (Միստանը), Կենտրոնական Ասիան, Խաղարը (Կասպից շրջան) և դրա արևմտյան շրջանը, որն անվանվում է «Արբան, Ադրբեջան և Հայաստան»:

Քարտեզի ձախում նշված մեծ ծովը ներկայացնում է Պարսից ծոցը, Արաբական ծովը, ինչպես նաև Հնդկական ու Խաղաղ օվկիանոսները միասնաբար, որի մեջ առկա են չորս կղզիներ: Աջ կողմի ծովը Միջերկրականն է, որից կամարածն ենթև է իջնում Էգեյան ծովը՝ գնալով դեպի Սև ծովը և միանալով Կասպից ծովին: Զախ կողմի կապույտ շրջանը Արալի լիճն է, իսկ վերի գետը Նեղոսն է, որի հինգ ակունքները սկիզբ են առնում շրթունքածև պատկերված Լուանի լեռներից:

Երկրների անուններում Կասպից ծովից հարավ-արևմուտք նշված է նաև Հայաստանի անունը՝ Պարսկական Ատրպատական-Ադրբեջանի հարևանությամբ:

Զափերը՝ 20x32 սմ:

Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Add. MS 23542, f36a:

Քարտեզ 7. Աբու Ասհադ իբն Մոհամմադ ալ-Ֆարսին՝ ճանաչված ալ-Իսթախրի անունով (մահացած 950–ականներին), բնիկ պարսիկ էր: Նա հայտնի էր որպես արաբ աշխարհագրագետ և պատմաբան, քանի որ իր աշխատությունները շարադրել է իսլամական աշխարհի ընդհանուր լեզվով՝ արաբերենով:


Ճամփորդելով ամբողջ Միջին Արևելքով, Հյուսիսային Աֆրիկայով և Միջերկրականի շրջանով՝ նա գրել է իր «Քիթաբ ու մասալիք վա ալ-Մամալիք» աշխարհագրական գիրքը (Գիրք ձանապարհների և երկրների մասին) 934–950 թվականների շրջանում: Ձեռագիրը պարունակում է Բալխի դպրոցի տեսակի աշխարհացույց քարտեզ, որը կենտրոնանում է իսլամական աշխարհի վրա՝ ուղղորդված հարավով դեպի վեր: Այստեղ ցուցադրված քարտեզը բուն ձեռագրից 1836 թվականին Բադդադում պարսկերեն թարգմանված մեկ այլ ձեռագրի պատճենն է: Ալ-Իսթախրիի ձեռագրի պատճենները, բացի



Քարտեզ 8. Իսթախրիի այս քարտեզը, որը կոչվում է «Հայաստանի, Արրանի (Աղվանքի) և Ադրբեջանի քարտեզը», նրա 934-950 թթ. շարադրած «Քիթաբ ու մասալիք վա ալ-մամալիք» աշխարհագրական գրքի (Գիրք ճանապարհների և երկրների մասին) բնագրի մեկ այլ օրինակից է: Կասպից ծովի արևմուտքում են նշված Բաքուն (կանաչ), Շաբրանը (կարմիր) և Դերբենդը (կանաչ), որոնցից դեպի արևմուտք նշված է Շիրվանը (դեղին): Կուր գետի արևմտյան ծայրում պատկերված է Թիֆլիս քաղաքը (կարմիր), որտեղից ճանապարհը տանում է դեպի Բարդես (Պարտավ) քաղաքը՝ անցնելով Շամսորի (Շամգոռ) և Գանձակի միջով: Արաքսի հարավում՝ քարտեզի արևմտյան սահմանում են Կալիկա (Կարին կամ Էրզրում՝ կարմիր) և Մանազկերտ (կանաչ) քաղաքները: Իրանական Ատրպատականի Սաբալան լեռան հարավում աջից տեսնում ենք Արդաբիլը (դեղին), Խոնջը, Սարան (Սարաբը՝ կարմիր), Մարանդը, Ահաբը, Էրամը և Դաբիլը (Դվինը՝ կարմիր):

Դրանց հարավում՝ կարմիր շրջանի վրա, գրված է. «Հնում Նաշվա էր, իսկ այժմ՝ Նախջևան»: Այստեղ Արարատի երկու գագաթներն ունեն իրենց հայերեն անվանումը՝ «Փոքր Մասես լեռ» և «Մեծ Մասես լեռ»: Սրանց հարավում է Արգանը (կանաչ), իսկ Արդաբիլից հարավ-արևմուտք տանող ճանապարհի վրա են Միանեն, Մարաղան, Դախարդանը, Ուրմիան, Սալմաստը, Խոյը, Բերկրին, Արճեշը, Խլաթը և Բիթլիսը (կարմիր):

Ճանապարհի հարավում մակագրված է՝ «Հայաստանի շրջան»: Շրջանաձև կապույտ լիճը կոչվում է «Դեյլամի կամ թագավորական ծով», որն Ուրմիա լիճն է, իսկ դրա ներքևի ձվաձիր լիճը կոչվում է «Հայկական ծով», որը Վանա լիճն է:



Չափերը՝ 15x23 սմ:

Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. OIOC Ref. I.O. Islamic 1026:



(Աղվանք): Արաքսի ներքևում մակագրված է «Ազերբայջան», որն Իրանի Ատրպատական նահանգն է, իսկ դրանից ներքև՝ արևմուտքում, երկու գետերից աջի վերջավորության և ձկաձև Կապուտան լճի (Ուրմիո լճի) միջև գրված է Արմինիյե (Հայաստան): Տեքստի մեջ ցուցակագրված երկրների ու նրանց պատկանող վայրերի ու քաղաքների տեղանունները հետևյալ կերպ են նշված.

- Աղվանքում՝ Բաբ ու Աբուսար (Դերբենդ), Շիրվան, Շամախի, Շաքի, Թիֆլիս, Զանդա (Գանձակ Գյանձա), Բարդահե (Պարտավ, Բարդա):


- Ատրպատականում (Պարսկական Ադրբեյջան)՝ Մարանդ, Խոնջ, Թավրիզ, Արդաբիլ, Զանձան, Մարաղա, Դաջերման, Ուշնե (ներկա Օշնավիլեն), Խոյ, Ուրմիո կամ Կապուտան լիճ: Այս քաղաքները ներկայում Պարսկաստանում են:

- Հայաստանում՝ Խլաթ, Դվին, Վարդան (Վարդական), Կարևկա (Կարին կամ Էրզրում), Արզան, Բիթլիս, Միաֆարդին (սրճագույն ներկված՝ լեռների մյուս կողմում), Խլաթի լիճ (Վանա լիճ) և Արարատ լեռ:

Ֆրանսիայի ազգային գրադարան, Ref. MS Arabe 2214:

Քարտեզ 9. Այս՝ «Հայաստանի, Աղվանքի ու Ատրպատականի քարտեզը», վերցված է Իբն Հաուբալի Սուրաթ ու-Արդ-ից, (Երկրի պատկեր) աշխարհագրական ձեռագրից: Քարտեզում գետերը ներկված են կապույտ, իսկ լեռները՝ բաց սրճագույն: Կապույտ ժապավենները Արաքս և Կուր գետերն են, որոնք հոսում են դեպի Կասպից ծով: Սրանց միջև մակագրված է Արանիյա





Քարտեզ 10. Սևիլիայի Իսիդոր եպիսկոպոսի (570–636 թթ.) աշխարհի քարտեզը պատկանում է T–O քարտեզների ընտանիքին: Նրա աշխատանքների մեջ կան շատ նման քարտեզներ, որոնք ընդհանրապես պարզ տեսակի են (տե՛ս քարտ. 13), բայց այս մեկը, որը բնօրինակի 11–րդ դարի պատճենն է, ավելի զարդարուն է և ունի հավելյալ մանրամասն տեղեկություններ:

Քարտեզում արևելքը վերև է տեղադրված, իսկ ուղղահայաց բաժանումը, այսինքն՝ Միջերկրականը, այստեղ լայնացված է և զբաղեցնում է քարտեզի մեծ մասը՝ պատկերված իր տարբեր կղզիներով: Կարմիր ծովը, որը նկարված է սեպաձև, ներկված է կարմրագույն: Միջերկրականի վերևի ձախ կողմում կարելի է տեսնել Արարատը՝ Նոյյան տապանով հանդերձ, որի մոտ մակագրված է «Հայաստան»:

Քարտեզի բուն շեշտը Եվրոպայի վրա է, որտեղ նշված են բազմաթիվ երկրներ ու քաղաքներ:

Տրամագիծը՝ 26 սմ: Բավարիայի պետական գրադարան, Մյունխեն, Ref. Clm 10058. f154v:



Քարտեզ 11. Այսպես կոչված Բեատոա աշխարհացույցը T-O քարտեզների ընտանիքի տեսակից է, որը վերցված է Լիբենացի Բեատոաի վանականի 8-րդ դարի «Ապոկալիպսիս» աշխատության 12-րդ դարի ձեռագիր պատճենից: Քարտեզը ձվաձև է՝ ճաշակով պատրաստված և խնամքով ներկված: Քարտեզի ուղղահայաց կապույտ տարածքը Միջերկրական ծովն է, դրա վերևի ձախի ճյուղավորումը Դոն գետն է, իսկ աջի ճյուղավորումը՝ Նեղոսը: Արևելքը տեղադրված է քարտեզի վերևում, որտեղ նաև պատկերված է Երկրային դրախտը՝ այդտեղից արտահոսող չորս գետերով:

Քարտեզի վերևի ձախ կողմում կանաչ զանգվածը Կովկասյան և Տավրոսյան լեռներն են, որոնց միջև մեծ տառերով գրված է «Հայաստան», իսկ դրանց վերևում նշված է «Ազվանքը»: Աշխարհը շրջապատող ծովերի մեջ առկա են բազմաթիվ ձկներ, հրեշներ և նավակներ: Քարտեզում պատկերված գլուխները ներկայացնում են առաքյալներին, որոնք տեղադրված են իրենց քարոզած երկրամասերում:

Քարտեզի հարավում (աջում) տեղ է տրվել հսկայական և անբնակ մի երկրամասի, որն, իբր, այրեցյալ և անմարդաբնակ հասարակածի կենտրոնական գոտին է: Այստեղ է ցույց տրված մեկ ոտք ունեցող էակը, որն իրեն արևից պաշտպանում է իր մեծ ոտքի ստվերում:

Չափերը՝ 454x326 մմ: Օղմա վանքի գրադարան, Իսպանիա:






Քարտեղ 12. Արու Աբդուլլահ Մոհամմադ իբն Շարիֆ ալ-Իդրիսիին կամ Էդրիսիին (1099–1166 թթ.) մեծագույն արաբ աշխարհագրագետներից մեկն է: Սիցիլիայում 1154 թվականին նա պատրաստեց «Ռոշերի գիրք» կարևոր աշխատությունը՝ Ռոժե Երկրորդ թագավորի համար: Սրա մեջ առկա է մեկ աշխարհացույց փոքր քարտեղ և 70 փոքրածավալ քարտեղներ, որոնք պատկերում են ժամանակի ճանաչված աշխարհի բոլոր երկրամասերը՝ բաժանված եղանակային գոտիների, որտեղ տեղանունները գրված են արաբերենով: Ըստ իսլամական աշխարհագրովիչան՝ աշխարհի 7 եղանակային գոտիներից ամեն մեկը ցուցադրված է 10 քարտեղում, այսպիսով՝ ամբողջ գիրքն ունի 71 քարտեղ:

Գերմանացի քարտեղագետ Կոնրադ Միլլերը, 1927 թվականին Իդրիսիի «Ռոժե գրքի» մեջ եղած փոքր քարտեղներն իրար միացնելով, վերակառուցել է «Իդրիսիի Մեծ քարտեղը»: Այս քարտեղն ուղղորդված է հյուսիսով ներքև, իսկ հարավով՝ վերև: Այստեղ վերաստված քարտեղը 70 մանրամաս քարտեղներից միայն մեկն է, որտեղ Սև ծովը երևում է աջ կողմում, իսկ Կասպից ծովը՝ Խազարը՝ ձախում:

Քարտեղում Հայաստանը բաժանված է երեք մասի: Վանա ծովի մոտ է Մեծ Հայքը՝ *aali arminia*, Փոքր Հայքը՝ *asafel arminia*-ն, լճի արևմուտքում է, իսկ երկու լճերի միջև նշված է երրորդ Հայաստանը՝ «Հայաստանի մնացորդը»՝ *bakiet arminia*: Քարտեղի մեջ կարելի է տեսնել հետևյալ քաղաքների անունները՝ *bidlis* (Բիթլիս), *kalikala* (Կարին կամ Էրզրում), *halat* (Ախլաթ), *hui* (Խոյ), *slamas* (Սալմաստ), *nasua* (Նախիջևան) և այլն:

Նույնիսկ 1154 թվականի այս քարտեղի մեջ Արաքսից հյուսիս տարածքն անվանված է *bilad alran* – Արրան կամ Աղվանաց երկիր, իսկ Ադրբեջան երկիրը (*bilad aderbaigan*) Արաքսի հարավային կողմում է:

Ամբողջական քարտեղի չափերը՝ 195x92 սմ: Հեղինակի հավաքածու, այժմ՝ Մատենդարանում:



Քարտեզ 13. Իսիդորի Եպիսկոպոսի այս պարզ տեսակի T-O քարտեզի 'O' բոլորակը շրջապատված է բնակելի աշխարհն ընդգրկող օվկիանոսով, իսկ բոլորակը բաժանված է երեք մայրցամաքների, որոնք են Ասիան, Եվրոպան և Աֆրիկան, T տառի կերպարանք ունեցող ջրային տարածքներով:

Եվրոպայի տարածքում նշված է 25 տեղանուն, որոնց թվում են Գերմանիան, Սկյովիան, Մեաիան, Մակեդոնիան, Դավմատիան, Պաննոնիան, Հոմեր, Տոսկանան, Գաղղիան (2 անգամ), Բեղգիան, Իտալիան, Իսպանիան, Կարթագենը, Գալիցիան և 10 այլ տեղանուններ:

Աֆրիկայի տարածքում ընդհանրապես տեղանուններ և այլ տեղեկություններ չեն մակագրված, մինչդեռ այսօրվա որոշ աֆրիկյան երկրներ ու շրջաններ ներառված են Ասիայի տարածքում:


Ասիայում Դրախտը նշված է քարտեզի արևելյան (վերի) ծայրամասում՝ օվկիանոսում պատկերված խաչի տակ: Քաղաքներից նշված են Երուսաղեմը, Բեթղեհեմը և Երիբովը (Jericho):

Ասիայի տարածքը լի է տարբեր տեղանուններով, որոնց մեծ մասը քաղաքների և երկրների անուններ են: Սրանց մեջ են Վիրբը (Hiberia), Ադվանքը և երկու Հայաստաններ՝ մեկը Մեծ Հայքը, իսկ մյուսը, որը տեղակայված է առաջինից հարավ արևմուտք՝ Կիլիկիա անվան մոտ, Կիլիկիայի հայկական թագավորությունն է, որը քարտեզը պատրաստելու ժամանակ ապրում էր իր ծաղկուն շրջանը և եվրոպական առևտրական կենտրոնների հետ աշխույժ 7 se8t առևտրական ու քաղաքական կապերի մեջ էր:

Ասիայի արևելյան ծայրամասում են Հնդկաստանը, Պարթևաստանը, Ասորեստանը, Մարաստանը և Պարսկաստանը: Քարտեզի հյուսիս-արևելքում Հայաստան (Armenia) մակագրության տակ կարելի է տեսնել Միջագետքը, Եգիպտոսը (Ուրֆա), Դամասկոսը, Սիրիան, Անտիոքը, Հիբլանիան և ուրիշներ: Սրա արևմուտքում են Կապադովկիան, Փոյոպիան և Փոքր Ասիան, իսկ Ադվանքը (Ալբանիան) և Վիրբը (Իբերիան) տեղադրված են դրանցից հյուսիս:

Տրամագիծը՝ 16,3 սմ: Ֆրանսիա, էքս-ան-Փրովանս, Մեծանի գրադարան:





Քարտեզ 14. Այս անանուն հայերեն ձեռագիր քարտեզը, ըստ հեղինակի մասնագիտական վերլուծության, պատկանում է 1260–1340 թթ. շրջանին: Ձեռագիրը մի հավաքածուից է, որը համատեղվել է 15-րդ դարում: Քարտեզը բոլորակ է՝ արևելքով ուղղորդված դեպի վեր: Սա պարզապես T-O տեսակի քարտեզի որոշ չափով զարգացած տարբերակն է, որի T տառի ուղղահայաց մասը զույգ կարմիր գծերով նշված Միջերկրական ծովն է, ձախ թևը կարմիր գծով նշված Դոնն է, իսկ աջ թևը՝ Նեղոսը:

Քարտեզի կենտրոնում համեմատաբար խոշոր պատկերված է Երտաաղեմ քաղաքը՝ իր դարպասներով և թաղամասերով: Մինան լեռը պատկերված է նրա հարավ-արևմուտքում, որից հարավ կարելի է տեսնել Կարմիր ծովը: Քարտեզը ուղղահայաց բաժանող գծի (Միջերկրականի) ձախում մակագրված է «Այս կողմն Էրոպա», որի մոտ նշված են Ալամանք (Գերմանիա), Ֆրանքս (Ֆրանսիա), Սպանիա, Պոպղարք, իսկ ավելի ներս՝ Վենեթիա (Վենետիկ): Նույն ուղղահայաց գծի ձախից շարունակվող գծի (ծովի) վրա գրված է «Կիպրոս»,

«Կոստանդնուպոլիս», որտեղից ուղղանկյուն թեքվելով՝ ծովը շարունակվում է դեպի Ասիա՝ դառնալով Սև ծովը, որը հասնում է մինչև կարմիրով նշված Դոն գետը:

Միջերկրականի աջում գուգահեռ կարմիր գծերով նշված և մակագրված է «Այս կողմն Աֆրիկե», որից վերև կարմիր շրջանը նշում է «Փարավոն և գորքն Եգիպտոսի»: Ասիան գրավում է քարտեզի մեծ մասը: Այստեղ՝ Դոնի ձախ ծայրամասում, տեսնում ենք Ըոսպք (Ռուսաստան), ապա հերթակալնությունը՝ Կաֆա, Ազախ, Սարա և Սորազմ (Կենտրոնական Ասիա) տեղանունները: Քարտեզի եզրի մոտ են Սայթալքը (Չինաստան), Ջայբունը (Ճապոնիա) և Աշխարհ Հնդկացը:

Այս բոլոր երկրները Մետաքսի ճանապարհի վրա գտնվողներն են:

Քարտեզի առանցքին ավելի մոտ նշված են Բաղդատ, Դմշխ (Դամասկոս) և Մերդին քաղաքները, որոնք Մետաքսի ճանապարհի վերջին հանգրվաններից են:

Ամբողջ աշխարհը շրջապատված է ծովով՝ մակագրված. «Համատարած ծովն որ պատ է զաշխարհն այս կերպիս է»:

Տրամագիծը՝ 125 մմ: Մատենադարան, Երևան, Ձեռագիր թիվ 1242:





Քարտեզ 15ա

Քարտեզ 15/15ա. Այսպես կոչված «Սաղմոսային» այս քարտեզը ներդրված է 1250 թվականի ձեռագիր սաղմոսարանի մեջ: Քարտեզը միջնադարյան T-O ձևով է գծված: Չնայած նրան, որ նույն ժամանակ գոնե Եվրոպայի քարտեզը համեմատաբար ճշգրիտ գծելու համար արդեն իսկ գոյություն ունեին բավարար քարտեզագրական տեղեկություններ, բայց և այնպես քարտեզ պատրաստողը որոշել է հետևել քրիստոնեական սկզբունքներին՝ անտեսելով եղած գիտական փաստված հիմքերն ու տեղեկությունները:

Քարտեզը շրջանաձև է, որի վերը կանգնած է Քրիստոսը, ձեռքին՝ երկրագունդը՝ շրջապատված խնկարկող հրեշտակներով: Աշխարհը շրջապատված է օվկիանոսով և 12 հողմերով: Հեռավոր երկրներում բնակվող երևակայական էակները զբաղեցնում են քարտեզի ներքևի աջ կողմը: Արևելքը քարտեզում վերն է, որտեղ պատկերված է Դրախտը՝ այդտեղից դուրս հոսող գետերով, որտեղ նաև ներկա են Ագամն ու Եվան: Ըստ Հին Կտակարանի՝ գոգ և մագոգ ժողովուրդների ապրած երկրամասը շրջապատված է պարիսպներով, իսկ Կարմիր ծովի մեջ պատկերված ճեղքվածքը նշում է, թե ինչպես ջրերը բացվեցին՝ թողնելով Մովսեսին, որ հրեաներին ծովն անցկացրեց և Պաղեստին առաջնորդեց:

Այստեղ Երոսաղեմը քարտեզի և աշխարհի կենտրոնն է: Արարատը և վրան նստած կիսալուսնի կերպ ներկայացված Նոյյան տապանը տեղադրված են ժամացույցի սլաքի ժամը 10-ի ուղղով՝ Կովկասյան լեռներից հարավ: Տապանի մոտ կարելի է կարդալ «Արմենիա» անունը՝ մակագրված կարմիրով: Քարտեզում նշված են նաև այլ երկրների ու քաղաքների անուններ և հավելյալ տեղեկություններ:

Հայաստանի մասը ցուցադրված է քարտ. 15ա-ում:

Չափերը՝ 10 x 15 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Additional MS. 28681:



Քարտեզ 16↑ և 16ա. Այս քարտեզը Պտղոմեոսի «Աշխարհագրություն» հատորի հնագույն տպագրություններից է, որը պատրաստել է Մարտին Վալդզեմյուլլերը և տպագրել է Շոտտը 1513 թվականին: Սա աշխարհացույց քարտեզ է, որտեղ աշխարհը ցուցադրված է՝ շրջապատված 12 հողմերով՝ բաժանված եղանակային գոտիների: Ծովերը ներկված են կապույտ, բացառությամբ Կարմիր ծովի, որը ներկված է կարմիր, իսկ լեռները կանաչ են: Մեծ և Փոքր Հայքերը նշված են մեծ տառերով՝ Սև և Կասպից ծովերի միջև, ճանաչված աշխարհի համարյա կենտրոնում: Հայաստանների հարևանությամբ են արևելքում՝ Մարաստանը, Պարթևաստանը, իսկ հյուսիսում՝ Ադվանքն ու Աբխազիան: Ադրբեջանը բացակայում է:

Հնդկական օվկիանոսը պատկերված է ամբողջովին շրջապատված ցամաքներով, իսկ աշխարհի ծայրամասերի սահմաններն անավարտ են:

Պտղոմեոսի «Աշխարհագրություն» հատորից մեզ հասել է ավելի քան 40 օրինակ ձեռագիր տեքստ, որոնցից մի մասն անավարտ է, իսկ տպագրության գյուտից հետո՝ 1477-ից մինչև 1600-ական թվականները, գիրքը տարբեր երկրներում հրատարակվել է ավելի քան 50 անգամ: Ամեն հրատարակիչ իր քարտեզները գծագրելիս հիմնվել է ձեռագրի տեղանունների բացատրությունների ու աշխարհագրական տվյալների վրա, այնպես որ, չնայած քարտեզներն իրարից տարբերվում են, սակայն հիմնականում շատ բանով նման են իրար:

Պտղոմեոսյան քարտեզներն ընդհանրապես պարզ են և չունեն զարդարուն ցուցատախտակներ, գլխագրեր և վերնագրեր, որոնք ընդհանրապես էին 15-16-րդ դարերի որոշ քարտեզներում:

Չափերը՝ 61x45 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps C.1.d.9:





Քարտիկ 16ա



Քարտեզ 17. Քարտեզը Պողոմնոսի «Աշխարհագրություն» հատորի մեկ այլ հնագույն տպագրություններից է, որը պատրաստել է Նիկոլաոս Գերմանիոսը և հրատարակել Գերմանիայի Ուլմ քաղաքում 1482 թվականին Լեոնարդ Հոլմի միջոցով: Սա Պողոմնոսի ատլասի «Ասիայի երրորդ քարտեզ»-ն է, որտեղ ցուցադրված են Վիրքը, Կոլխիսը, Աղվանքը և Մեծ Հայքը:

Քարտեզի հյուսիսում ցուցադրված են երեք երկրներ: Առաջինը Կոլխիսն է (Աբխազիան՝ դեղին)՝ Սև ծովի արևելյան ափին, շրջապատված Կովկասյան լեռներով, երկրորդը Իբերիան է (Վիրքը՝ կապույտ)՝ ամբողջովին շրջափակված լեռներով: Այս երկուսը մի քանի այլ հին երկրների՝ Մեգրեթիա, Կախեթիա, Իմերեթիա և ուրշների հետ միասնաբար այժմ կազմում են Վրաստանը: Երրորդ երկիրը Ալբանիան է (Աղվանքը՝ վարդագույն), որը Կասպից ծովի արևմտյան ափին է՝ շրջապատված Կովկասյան լեռներով, որի տարածքի մեծ մասը 1918 թվականից ի վեր Ադրբեջանի Հանրապետության տարածքում է:


Մեծ Հայքը՝ Արմենիա Մայորը (սպիտակ), այս երկրների հարավում է և սահմանակից է հարավից՝ Մարաստանին (Մեդիա) ու Ասորեստանին, իսկ արևմուտքից՝ Փոքր Հայքին (Արմենիա Մինոր), որը Մեծ Հայքից բաժանված է Եփրատ գետով: Հայաստանի տարածքում ցուցադրված են կարևոր քաղաքները, լեռները, գետերը և լճերը: Լճերի թվում են Տոսպիտան (Վանա) լիճը, որի ափին է Տոսպիա-Տուշպա (Վան) քաղաքը: Հայաստանի հարավում ակունք է առնում Տիգրիսը՝ հոսելով դեպի հարավ, իսկ Եփրատը ներկայացված է որպես Մեծ Հայքի և Փոքր Հայքի սահման, որը հոսում է դեպի հարավ՝ Միջագետքում միանալու Տիգրիսին:

Մյուս լիճը կոչվում է Աստիարա, որի մոտ նշված է Արտամետ քաղաքը: Այս քաղաքը իրականում Վանա լճի մոտ է: Երրորդ լիճը կոչվում է Լիխնիտիս, որը Սևանա կամ Գեղամա լիճն է: Մեծ Հայքի քաղաքներից այստեղ կարելի է ճանաչել նաև Արտաշատը, Արմավիրը, Տիգրանակերտը, Բագավանը, Արշամաշատը, Նախուանան (Նախիջևանը), Խորան (Կարսը) և Թերվան (Երևանը):

Չափերը՝ 54x43 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Rare Books G8 175:



TABVLA NOVA ASIE MINORIS



Քարտեզ 18. Փոքր Ասիայի այս քարտեզը Պողոսյանի «Աշխարհագրություն» ատլասի 1513 թվականին Ստրասբուրգում տպագրված հատորից է, որը պատրաստել է Վալդզեմյուլերը և տպագրել Շոտտը: Քարտեզը պատկերում է Անատոլիան և Փոքր Հայքը և կոչվում է «Ասիայի նոր քարտեզ», որի վրա ցամաքի տեղանուններից նշված են միայն ամենակարևորները, իսկ ծովափնյա քաղաքներն ու վայրերը ցուցադրված են հատկապես մանրամասնորեն: Այստեղից կարելի է եզրակացնել, որ քարտեզը պատրաստված է նավարկողների գործածության համար, ինչպես լինում են պորտուլան քարտեզները (տե՛ս նաև քարտ. 19, 20, 21): Այստեղ առաջին անգամ Պողոսյանի քարտեզներում Փոքր Ասիայի վրա նշվում է «Թուրքիա» անվանումը: Փոքր Հայքը զբաղեցնում է թերակղզու արևելյան ծայրամասը, իսկ Մեծ Հայքը սկսվում է Եփրատից և տարածվում Անատոլիայից արևելք՝ դեպի Հայկական լեռնաշխարհ: Այսպիսով՝ Եփրատ գետը Մեծ և Փոքր Հայքերի բաժանող սահմանն է:

Չափերը՝ 61x45 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps C.1.d.9:



Քարտեզ 19. 1339 թվակիր Միջերկրական ծովի այս պորտոլանի հեղինակը Անձելինո Դուսերտոն է։ Սա մեզ հասած թվագրված և ստորագրված հնագույն պորտոլանն է։ Ինչպես մյուս կատալան քարտեզները, այստեղ էլ, բացի ծովափնյա մանրամասնություններից, կան նաև որոշ չափով տեղեկություններ ցամաքների ներքին շրջանների վերաբերյալ։

Արտատպվածը ամբողջական պորտոլանից Միջերկրականի արևելյան և Փոքր Ասիայի շրջանն է, որտեղ ավելան Մեծ Հայքն ու Կիլիկիո հայկական թագավորությունը։

Չափերը՝ 102x75 սմ։ Ֆրանսիայի ազգային գրադարան, Փարիզ, Ref. Res. Ge. B 6:

Մանրամասը և այլ տարբերակը տե՛ս հաջորդ էջում։





Քարտեզ 19ա. Սև ծովի հարավ-արևելքում՝ կողմնացույցի գծերի (լրջսողորմների) հատման կետի կենտրոնում, կարելի է կարդալ «Հայաստան» անունը, որտեղից ակունք են առնում երկու գետեր՝ Տիգրիսն ու Եփրատը: Գրվածքի ներքևում են Արարատ լեռը և Նոյյան տապանը՝ լեռան վրա: Եփրատի վրա պատկերված է Արգենջան (Երզնկա) քաղաքը: Հայաստանի շրջանի այսպիսի ցուցադրումը յուրահատուկ է շատ պորտուլանների, որոնցից մի քանիսը արտատպված են այս հատորում:

Քարտ. 19բ. Միջերկրականի հյուսիսարևելյան անկյունում տեղակայված Կիլիկիան այստեղ կրում է «Էրմինիա Մինոր», այսինքն՝ «Փոքր Հայք» անվանումը, և նրա քաղաքները կանաչ կամարի ներքո են: Այս կամարն ունի հույժ կարևոր նշանակություն: Որպես տեղեկություն՝ քարտեզը ցույց է տալիս, որ Կիլիկիայի նավահանգիստներն առանձնանում են շրջապատի իսլամական քաղաքներից և նավահանգիստներից, քանի որ արևմուտքից եկող նավարկող խաչակիրների կողմնորոշման համար կարևոր էր իմանալ, թե նավահանգիստները բարեկամ են, թե թշնամի:

Քարտեզում պատկերված են Կիլիկիայի դրոշները, իսկ կարևոր քաղաքների շարքին են Լայպլոն (Այսար), Տարսուսը (Թարսուսը) և Քուչոն (Կոոփկոսը): Սպիտակ խաչերով սև դրոշը Կոոփկոս քաղաքի դրոշն է, իսկ առյուծի պատկերովը՝ Այաս քաղաքինը:

Քարտեզ 20. Այս դետալը վերցված է Աբրահամ Կրեսկի 1375 թ. պորտուլանից և պատկերում է Միջերկրականի հյուսիսարևելյան հատվածը, որտեղ Կիլիկիայի հայկական թագավորությունն է:

Ինչպես մյուս քարտեզում, այստեղ ևս կրկնված են հայկական բարեկամ նավահանգիստների անունները և դրանց կրած դրոշների մանրանկարները՝ բոլորը տեղադրված կանաչ՝ բարեկամական կամարի շրջանակի մեջ:




Քարտեզ 19բ



Քարտեզ 20





Քարտեզ 21ա

Քարտեզ 21, 21ա/20բ. Մեսիա դե Վիլադեստեը 15-րդ դարի կատալան քարտեզագետներից էր, ում հանրահայտ «Վիլադեստե» կոչվող պորտուլանը պատրաստվել է 1413 թվականին: Քարտեզը գծված է մագաղաթի վրա և ունի ցայտուն գույներով արված մանրանկարներ:

Այս քարտեզը համեմատաբար մեծ է և ունի կատալան քարտեզների յուրահատկությունը, քանի որ բացի ծովափնյա քաղաքներից ու դետալներից՝ տալիս է նաև ծովափնյա շրջաններից ներս ընկած տարբեր քաղաքներ, օազիսներ, լեռներ և այլ համառոտ տեղեկություններ: Այստեղ Աֆրիկայի ցամաքամասում պատկերված են մի քանի թագավորներ, ինչպես նաև երկու արաբ ցեղապետեր՝ նստած ուղտերի վրա: Քարտեզը բազմաթիվ նմանություններ ունի 1375 թվականին պորտուլան քարտեզագիր Աբրահամ Կրեսկի պատրաստած «Կատալան ատլասի» հետ, որը Ֆրանսիայի թագավոր Շառլ Հինգերորդին էր նվիրված և պահպանվում է Փարիզի Ֆրանսիայի ազգային գրադարանում:



Քարտեզ 21բ

Քարտեզի քարտ. 20ա հատվածում Հայկական բարձրավանդակը ցուցադրված է Սև ծովի հարավ-արևելքում որպես Ավետարանի երեք գետերի՝ Արաքսի, Եփրատի և Տիգրիսի աղբյուրը: Արաքատը պատկերված է կողքի վրա, որի գույգ գագաթներին է նստած վրանի տեսք ունեցող Նոյյան տապանը, իսկ սրա ներքևում նշված է Հայաստանը: Սա կատալան քարտեզների մեջ հաճախ հանդիպած Հայաստանը պատկերող ձևակերպն է:

Քարտեզի քարտ.19բ դետալը ցուցադրում է Կիլիկիայի հայկական թագավորության տարածքը, որի քաղաքները շրջափակված են կանաչ կամարով՝ նշելու, որ սրանք խաչակիրների համար բարեկամ՝ քրիստոնյա նավահանգիստներ են:

Չափերը՝ 115x85 սմ: Ֆրանսիայի ազգային գրադարան, Փարիզ, Ref. GeAA 566:

Քարտեզ 22. Այս քարտեզը Պիեռ Դեսեվիեի (1487–1553 թթ.) մի քանի պորտուլան աշխարհացույց քարտեզներից մեկն է։ Նրա «Պլանիսֆերա» կոչված այս աշխարհացույց քարտեզը պատկերում է աշխարհը Ամերիկայից մինչև Ճապոնիա, ներառյալ Խաղաղ օվկիանոսը։ Նրա մյուս քարտեզների նման սա էլ հսկայական մի քարտեզ է՝ շատ գեղեցիկ գծված 1550 թ. մագաղաթի վրա, ներկված և զարդարված տարբեր վառ գույներով պատրաստված Ֆրանսիայի Մոնտմորենսի քաղաքում։ Այս քարտեզն ունի ավելի մեծ թվով զարդարանքներ ու բացատրություններ, քան հեղինակի մյուս քարտեզները։ Քարտեզը մեծ է, հետևաբար պետք է այն դիտել սեղանին փռած վիճակում։ Այդ պատճառով էլ գրվածքները դասավորված են քարտեզի երկու կողմում՝ դիտելու և կարդալու համար։ Հյուսիսում եղած տեղանունները կարդացվում են քարտեզի վերևից, իսկ հարավային մասինը՝ ներքևից։






Այստեղ էլ պատկերված է ամբողջ աշխարհը՝ նախահանգիստների անուններով և ծովագնացության համար անհրաժեշտ մանրամասնություններով: Յամաքի ներսում հեղինակը նշել է քաղաքների և երկրների անուններ, մարդկանց ու կենդանիների պատկերներ ու տարբեր տեսարաններ: Առկա են նաև պատմական նյութերի և առասպելների արձանագրություններ:


Հեռավոր Արևելքի մասին այստեղ կան հավելյալ բացատրություններ, քանի որ այդ ժամանակաշրջանում աշխարհի այս մասն առևտրականների համար գրավիչ էր և նրանց հատուկ ուշադրության կենտրոնում:

Չափերը՝ 215x165 սմ:
Բրիտանական գրադարան,
Լոնդոն, Ref. Additional
MS 24065:



Քարտեզ 22ա. Այս քարտեզը նախորդ քարտեզի մի հատվածը՝ Միջին Արևելքն է, որտեղ կարելի է նաև տեսնել Հայաստանը: Հայաստանի հյուսիսում է Ալբանիա-Ադրվանքը, իսկ հարավում՝ Մարաստանը (Media), որն անվանափոխվեց պարսկական Ատրապատական-Ազերբայջանի:





Քարտեզ 23. Ջերարդոս Մերկատորի (1512–1594 թթ.) «Մեծ Հայքի, Իբերիայի, Կովսիսի և Ալբանիայի քարտեզը» վերցված է նրա՝ Պողոմեոսի գրքի հիման վրա պատրաստած «Կլավդիոս Պողոմեոսի աշխարհագրովիչյան քարտեզները» ատլասից, որը հրատարակվել է 1578 թվականին: Մերկատորի մասին տե՛ս բուն տեքստի 10–րդ գլուխը:

Հայաստանի տարածքում պատկերված են երկու լճեր, որոնք անվանված են Տուշպա և Արճեշ: Այս երկու անունները հայերենում վերագրվում են Վանա լճին: Հնարավոր է, որ քարտեզագետը Արճեշ անվանումը տվել է հանրաճանոթ Արճակ լճին: Քաղաքների և ավանների տեղերը շատ մոտավոր են, ինչը յուրահատուկ է սրա հիմքը ծառայող Պողոմեոսի գրքերին: Փոքր Հայքը սկսվում է քարտեզի արևմտյան ծայրամասից, իսկ Ասորյապատենը (Ադրբեջանը) ցուցադրված է Արաքս գետի հարավում, տեղադրված Պարսկաստանի սահմանների մեջ: Ինչպես Պողոմեոսի քարտեզների մյուս հրատարակությունների մեջ, այստեղ էլ նշված հայկական քաղաքների մեջ կարելի է տեսնել Տուշպան (Վանը), Արտամետը, Արտաշատը, Արմավիրը, Տիգրանակերտը, Բագրևանը, Արշամաշատը, Նախտանան (Նախիջևանը), Խորսան (Կարսը) և Թերվան (Երևանը):

Չափերը՝ 46x35 սմ: Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG29, այժմ՝ Մատենադարանում:



Քարտեզ 24. Աբու Ջաֆարիա իբն Մուհամմադ աբ-Ղազվինին (1203–1283 թթ.) պարսիկ աշխարհագրագետ էր, որը շարադրել է իր «Ասար ու բիլադ վա ախբար ու իբար» (Հուշեր վայրերի և արարածների մասին) աշխարհագրական բառարանը:

Ինչպես Ղազվինիի մյուս աշխարհացույց քարտեզներում, այստեղ էլ երկրագունդը բաժանված է եղանակային գոտիների և հատուկ շեշտ է դրված եղանակային պայմանների վրա: Քարտեզն ուղղորդված է հարավով վերև: Հյուսիսային հատվածում մակագրված է. «Այստեղ բավարար արևի լույս չկա, և ցրտի պատճառով կենդանիներ չեն ապրում»: Հարավային հատվածի մակագրություններից են. «Այս շրջանի մասին տեղեկություններ չկան»: «Խիստ շոգի պատճառով այստեղ կենդանիներ չեն բնակվում»:

Հյուսիսային բևեռի շրջանում մակագրված է. «Այս շրջանում Խոյից մինչև Կշեռք մեկ օր է, իսկ Կշեռքից մինչև Խոյը՝ մեկ գիշեր»: Հարավային բևեռի մոտ գրված է դրա հակառակը: Քարտեզում ձախի (արևեթի) ծովը Խաղաղ օվկիանոսն է, իսկ մեջտեղինը՝ Հնդկական օվկիանոսն ու Պարսից ծոցը: Արաբական թերակղզին գնդաձև ցամաքն է, որը ներառված է Հնդկական օվկիանոսի տարածքում: Նեղոսը նշված է իր ութ ակունքներով, որոնք միանում են ու հոսում դեպի Միջերկրականը: Սև ծովը Միջերկրականից ճյուղավորվում է, անցնում Կոստանդնուպոլսով և ձգվելով հյուսիս՝ միանում ցամաքի հյուսիսային սահմանում առկա ծովերին: Քարտեզում Սփրատն ու Տիգրիսը Սև ծովը միացնում են Պարսից ծոցին: Չեռագրի ծալքի մեջ է Կասպից ծովը, որի մի մասը տեսանելի է: Արաքսը արևելքում պատկերված է Կուրին միացած, որտեղ մակագրված է Արմանիյե (Հայաստան), որի մի կողմում Թալ-րիզն է, իսկ մյուս կողմում՝ Էրզրոմը:

Տրամագիծը՝ 30,5 սմ: Վարտեզը Գալերիի, Բալթիմոր, ԱՄՆ, Ref. W 593 # 52v–53r:






Քարտեզ 25. «Ալեքսանդր Մակեդոնացու գրաված երկրները» կոչված քարտեզը Աբրահամ Օրտելիուսի (1528–1598 թթ.) «Երկրագնդի ամբողջ տարածքը» ատլասի էջերից է՝ լատիներենով հրատարակված Ամստերդամում 1595 թվականին:

Քարտեզը ներկայացնում է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները մինչև Հնդկաստան: Այստեղ նշված են Հայաստանի երկու լճերը՝ Արճեշը և Տուշպան, որոնք իրականում նույն լճի տարբեր անվանումներն են: Այստեղ սրանք հավանաբար ներկայացնում են Վանա և Ուրմիո լճերը կամ էլ Վանա և Արճակ լճերը, բայց սխալմամբ ցուցադրված են միացած իրար և պատկերված որպես Տիգրիսի ակունքը: Սա էլ մեկ այլ կրկնվող սխալ է շատ քարտեզներում, որոնք, ըստ ժամանակի սովորույթյան, ընդօրինակվում էին միմյանցից:

Քարտեզում ներդրված պատկերը Յուպիտեր–Ամոնի տաճարն է, իսկ գլխազիրը նշում է, որ Օրտելիուսը քարտեզը նվիրել է ամստերդամաբնակ Հենրիկո Սկոտիոյին:

Չափերը՝ 49x37 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Ref. Maps C.3.d.6:



Քարտեզ 26. Աշխարհացոյց այս քարտեզը պատկանում է Օրտելիոսի գրչին և պատրաստված է 1598 թվականին իր «Փոքր ատլասի» համար, որը կոչվում է «Երկրագնդի հայե-լին»:

Այլ կողմում երևում է նույն քարտեզից Կովկասի հարա-վային տարածքի մանրամասը: Այստեղ նշված են մի քանի երկրներ, որոնք են Հայաստանը, Պարսկաստանը և Սիրիան: Անատոլիան նշված է որպես Փոքր Ասիա թերակղզու անվա-նումը, որի վրա հիմնվեց Օսմանյան կայսրությունը: Ազդե-ջանն ընդհանրապես բացակա է:

Քարտեզում նաև ցուցադրված են մի քանի քաղաքներ, որոնցից են Դերբենդը, Մոսկոյը, Թավրիզը, Հալեպը, Բադ-դադը, Շիրազը և Էրզրումը: Կասպից ծովը կոչված է Բաբլի ծով:



Բրիտանական գրադարան, Ref. Mops C.2.d.7:

Քարտեզ. 26ա






Քարտեզ 27. Թուրքական կայսրության այս քարտեզը Աբրահամ Օրտեկիոսի (1528–1598 թթ.) «Նրկրագնդի ամբողջ տարածքը» ատլասի 110-րդ էջն է՝ տպագրված Ամստերդամում 1595 թվականին լատիներենով: Նրա ատլասներն այնքան սիրված էին, որ հրատարակվել են 41 անգամ տարբեր լեզուներով, որոնցից որոշները պարունակում են մինչև 219 քարտեզ: Օրտեկիոսի մասին տես «Հայաստանի քարտեզագրության համատարտ պատմություն» տեքստի 10-րդ գլուխը:

Քարտեզում պատկերված են Թուրքիան և հարևան երկրները: Հայաստանի մի մասը, ընդհուպ մինչև Վանա լիճը Թուրքիայի գերիշխանության ներքո է: Վանա լիճը քարտեզում կոչված է «Աղթամար», որը լճի կղզիներից մեկի անունն է: Քարտեզը գծված է խեղաթյուրված. Վանա լիճը և Բաբու քաղաքը նշված են Կասպից ծովի հարավում: Այս երկու լճերի մոտ էլ նշված է «Բինգյուր» անունը, որը պատճառ է դառնում լճերի իրական անվանումների շփոթությանը: Փամանակի քարտեզների մեջ սա կրկնվող մի սխալ էր, որը շատերն են ընդօրինակել տեղանքն անձնապես տեսած չլինելու պատճառով:

Չափերը՝ 49x37 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps C.3.d.6:



Քարտեզ 28. Ֆիլիպ դե լա Ռուի պատրաստած «Հայաստանի քարտեզը» (1653 թ.) նշում է Հայաստանի չորս նահանգները՝ արևմտյան մասում են Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայքերը, որոնք գրավել էր Բյուզանդիոնը, իսկ Չորրորդ Հայքը Պարսկաստանի գրաված Մեծ Հայքն է։ Այս վարչական բաժանումները կատարվել էին Հռոմի անտո Ա կայսեր (483–565 թթ.) օրոք։

Քարտեզում կրկին տեսնում ենք Տուշպա և Արճեշ անունները, որոնք երկուսն էլ հայկական իրականության մեջ Վանա լճի անվանումներն են, բայց այստեղ դրանք տրված են Վանա և Ուրմիո լճերին։ Քարտեզում Ատրոպատենը (Ադրբեջան) Արաքս գետի հարավային ափին է, Մարաստանի (հին Պարսկաստանի) տարածքում։

Զափերը՝ 52x38 սմ։ Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG28, այժմ՝ Մատենադարանում։





Քարտեզ 29. Օսմանցի տաալին աշխարհագրագետ Մուստաֆա իբն Աբդուլկահր (1609–1657 թթ.), ճանաչված Քյալիբի Չելեբի կամ Հաջի Սալիֆա անունով, իր հանրահայտ «Ջիհան Նյումա» աշխարհագրական բնույթի աշխատությունը գրել է կյանքի վերջում, որը, սակայն, անավարտ է մնացել: Այստեղ ցուցադրված ձեռագրի օրինակը Չելեբիի աշխատությունից Փոքր Ասիայի արևելյան մասի վերաբերյալ երկու էջ է: Չեռագրի հաջորդ էջերում տրված են բացատրություններ Հայաստանի և նրա քաղաքների մասին:

Գրքի էջ 124a-ն տալիս է տեղեկություններ Վանի վիլայեթի վերաբերյալ, որտեղ հեղինակը նշում է. «Վանը Օսմանյան երկրի արևելյան սահմանի վրա է: Նրա արևելքում է Ադրբեջանը և Թավրիզ քաղաքը, հյուսիսում է Չըլդըրը (հայերեն՝ Զարիշատ, տեղակայված է Կարսի հյուսիսում և Արդահանի արևելքում) արևմուտքում՝ Դիարբեքիբը...»

Մյուս էջը Վանի նահանգի նախնական մի ձեռագիր քարտեզ է, որտեղ նշված են շրջանի կարևոր քաղաք-

ները, ինչպիսիք են Արճեշը, Ադելշավազը (Արժկե), Բիթլիսը և Ախլաթը, Մուշը, Մուրը և այլն: Վերին՝ աջ կողմում ցույց է տրված Ուրմիա լիճը:

Քարտեզն ուղղորդված է արևելքով դեպի վեր: Հեղինակի մահից հետո հրատարակիչ Իբրահիմ Մովթեֆերիկյան լրացրեց վարպետի գիրքը՝ օգտվելով Չելեբիի, ինչպես նաև իբն Բահրամիի և եվրոպական աղբյուրների քարտեզներից, որը նա տպագրեց 1732/33 թվականին: Այս տպագիր գրքի 41-րդ գլուխը վերաբերում է Հայաստանին, որտեղ տրված են ավելի մանրամասն տեղեկություններ, քան առկա են բուն ձեռագրում: Նույն գրքի 39-րդ գլուխը Արևելյան Հայաստանի մասին է՝ նշելով, որ սա պարսկական գերիշխանության ներքո է: Ընդհանուր առմամբ Չելեբիի իր աշխատության մեջ օգտվել է Աբուլֆիղայի «Թաղվիմ ուլ-Բոլբան»-ի և ալ-Իսթախրիի ձեռագրերի մեջ եղած աշխարհագրական տեղեկություններից:

Չափերը՝ 17x28 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Oriental MS Or 1038:



Քարտեզ 30. Ֆրանսիացի քարտեզագետ Նիկոլաս Սանսոնը (1600–1667 թթ.) իր առկար տպագրեց 1648 թվականին, որին հաջորդեցին ուրիշ վերահրատարակումներ՝ իրականացված նրա որդիների ջանքերով: «Հայաստանի, Իբերիայի, Կովխիսի և Ալբանիայի քարտեզը», որը ցուցադրված է այստեղ, հիմնված է Պողոմեոսի «Աշխարհագրություն» վրա և տպագրված է 1658 թվականին լատիներենով:

Իրականում այս և սրա նման այլ քարտեզների հիմքն է ծառայում 1500 տարի հնություն ունեցող Պողոմեոսի «Աշխարհագրություն»-ը, որը փաստում է այս աշխատության կարևոր դերը՝ համաշխարհային քարտեզագրության մեջ:

Հայաստանի տարածքում պատկերված են չորս լճեր, որոնցից ամենամեծը Լիխնիտիան է, այսինքն՝ Սևանը, որն իրականում ամենափոքր լիճն է: Մյուսներն են Արեւոտանան, Արսեսան և Տուշպան, որոնք բոլորը հայկական իրականության մեջ վերաբերում են Վանա/Արճեշ լճին: Թավրիզ քաղաքի անունը գրված է Գաբրիս, իսկ Հայաստանի քաղաքներից կարելի է տեսնել Արմավիրը, Տիգրանակերտը, Արտամետը, Տուշպան և Թերվան (Երևան), բոլորն էլ տեղադրված համեմատաբար ճիշտ:

Չափերը՝ 24x19 սմ: Մասնավոր հավաքածու, Նյու Ջրրդի, ԱՄՆ:





Քարտեզ 31. Յոհաննես Բլաուն (1596–1673 թթ.) պատրաստել է շատ գունագեղ և գեղեցիկ քարտեզներ: Նրա առաջին ատլասը՝ այսպես կոչված «Երկրագնդի տարածքը կամ նոր ատլասը», տպագրվեց երեք հատորով 1635 թվականին, որին հաջորդեցին ուրիշները: Ատլասի հատորները սովորաբար տպարանալով դարձան նրա ամենամեծ աշխատությունը՝ 12 հատորանոց «Մեծ ատլասը»՝ հրատարակված 1672 թ.:

Թուրքական կայսրության այս քարտեզը, որտեղ սահմանները նշված են դեղինով, վերցված է նրա 1668 թ. «Նոր ատլասից» և ցույց է տալիս Հայաստանը՝ բաժանված Օսմանյան և Պարսկական կայսրությունների միջև: Լճերի և Կասպից ծովի ձևը դեռևս հիմնված է Պտղոմեոսի տված տեղեկությունների վրա: Քարտեզի խորագիրը զարդարված է գունավոր պատկերներով, որոնցից կարելի է գտնել Բլաունի բոլոր քարտեզներում:

Չափերը՝ 52x41 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps C.4.d.1 vol.9, 18:
 Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG36, այժմ՝ Սատենադարանում:



Քարտեզ 32. Ֆրեդերիկ դե Վիտը (1630–1706) իր «Ատլասը» հրատարակել է 1670 թվականին Ամստերդամում։ Նրա քարտեզներն իրենց գրավիչությամբ տեղ են գտել տարբեր հրատարակիչների հավաքածուներում և առլաններում։

Ատլասից վերցված այս քարտեզը կոչվում է «Պարսկաստանը, Հայաստանը, Անատոլիան և Արաբիան», որը շատ բաներով նման է Մերկատորի վերջին ատլասներում նշված նույն աշխարհամասի քարտեզներին։ Հայաստանի չափը, որը ներկված է վարդագույն, չափազանցված է՝ ներառելով Միջագետքի և Քուրդիստանի մի մասը։ Հայաստանի արևմտյան մասը, ըստ ժամանակի որոշ քարտեզների, կրում է «Թուրքոմանիա» անվանումը։ Իսկ Կովկասյան Ալբանիային (այսօրվա Ադրբեջանի Հանրապետությունը), որը քարտեզի մեջ Պարսկաստանի գրաված տարածքների սահմաններում է, տրված է Սեբվան, այսինքն՝ Շիրվան անվանումը։


Հայաստանի լճերն անանուն են, իսկ Արաքսին տրված է հայերեն Երասխ անվանումը։ Քաղաքներից այստեղ կարելի է տեսնել Ախալքալաքը, Արճեշը, Էրզրոմը, Բիթլիսը, Կարսը, Զուղան, Խրաթը, Դվինը Մանազկերտը, Վանը և Ուտանը։

Չափերը՝ 56x47 սմ։ Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps 146.C.5/6/7, Vol.3:

Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG16, այժմ՝ Մատենադարանում։



Of ARMENIA MAJOR, GEORGIA, &c.



Armenia is divided by the River Euphrates into two parts, Major and Minor. The greater Armenia is by the Turks call'd Turcomania, by the Persians Ibouva, Emnoe, or Aremnoe, by the Nestorians


Քարտեզ 33. Բրիտանացի Ռոբերտ Մորդենի (մահ.1703) «Սրբազրված աշխարհագրություն» փորձաձևվալ առ լաւ տպագրվել է 1680, 1686 և 1770 թվականներին: Այստեղ վերատպված Հայաստանի և Վրաստանի քարտեզն ավելի մեծ ծավալով տպագրվել է 1688 թվականին: Քարտեզը նշում է Անդրկովկասի տարածքը, Վրաստանն իր պարսկերեն Գյուրջիստան անունով, ինչպես նաև Հայաստանը: Ղարաբաղը նշված է «Ղարաբագ» անվանմամբ, որը Սևանի հարավ-արևելքից հասնում է մինչև Արաքսի և Կուրի խառնարանը:

Կասպից ծովի արևմտյան շրջանը կոչված է Շիրվան: «Ադիրբեյջան» կոչվող երկրամասը Արաքսի հարավային ափին է՝ Պարսկաստանի տարածքում: Վանա և Ուրմիա լճերը տեղադրված են իրականությունը համապատասխանող վայրերում:

Քարտեզի ներքևի գրությունն մեջ նշված է, որ Մեծ Հայքը (Հայաստանը) թուրքերեն կոչվում է Թուրքոմանիա: Ղարաբաղի անվանման բացատրությունների համար տես քարտ. 52-ի բացատրականը:

Քարտեզի չափերը՝ 14x12 սմ: Անձնական հավաքածու, Ref. RG26, այժմ՝ Մատենադարանում:

Georgia Armenia Fig XC und XCI.



Քարտեզ 34. Այս քարտեզը Ալեն Մաննեսոն Մալեոփի (1630–1706 թթ.) հինգհատորանոց «Տիեզերքի բացատրությունը» գրքից է, որի երկրորդ հատորը նվիրված է Ասիային: Այս հատորների ֆրանսերեն օրինակը տպագրվել է 1683 թ., իսկ գերմաներեն թարգմանությունը՝ 1719 թ.:


Քարտեզում նշված է Ռուսաստանի հարավային մասը, Վրաստանը՝ պարսկերենով Գյուրջիստանը, և Հայաստանը անվանված է նաև Թուրքոմանիա, որի կարևոր քաղաքներից են հիշատակված Կարսը, Էրզրոսը և Նրևանը:

Կասպից ծովը կոչվում է իր հին պարսկերեն՝ Թաբարեստան անվանմամբ:

Չափերը՝ 10x15 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Maps 1295.f.1

Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG3, այժմ՝ Մատենադարանում:






Քարտեզ 35. Քարտեզը Ֆիլիպ Քլովերիուսի (1580–1622 թթ.) «Տիեզերական աշխարհագրություն» ատլասից է, որը տպագրվել է սկսած 1624 թվականից մինչև 1729 թ. և նույնիսկ ավելի ուշ: Այս քարտեզը 1683 թ. հրատարակությունից է և կոչվում է «Հայաստանը, Սիրիան և Միջագետքը»: Քարտեզը հիմնված է Պաղոմեոսի աշխատության վրա՝ կարևոր դեր տալով գետերին, որոնք գծագրված են չափազանցված լայնքով: Ըստ ժամանակի սովորովյան հարևան երկրների տարածքները թողնված են դատարկ:

Հայաստանի տարածքում առկա բաղաձայնից են Արմավիրը, Արտաշատը, Արտամեսը, Մալաթիան, Նիկոպոլիսը, Սեբաստիան, Սատարան (Սատաղը) և Տուշպա-Վանը:

Ազդրեջան անվանումը քարտեզից ընդհանրապես բացակայում է, իսկ «Ատրապատական»-ին, այսինքն՝ Պարսկական Ազերբայջան նահանգին, տրված է նրա հնամյա՝ «Մեդիա-Մարաստան» անվանումը:

Զափերը՝ 20 x 15 սմ: Հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG15, այժմ՝ Մատենադարանում:



Քարտեզ 36 ← և **36ա** →. Սա մեզ հասած հայերեն ձեռագիր առաջին իրական քարտեզն է, որը պատրաստել է Երեմիա Չելեբի Քէոմուրճեանը (1637–1695 թթ.) Կոստանդնուպոլսում 1691 թվականին: Քարտեզը պատրաստվել է իտալացի կոմս Լուգովիկո Մարսիլիի պատվերով (տե՛ս բուն տեքստում «Հայկական քարտեզներ» գլուխը): Քէոմուրճեանը, որը նաև հայտնի էր Հաջի Խալֆա Քյաթիբ Չելեբի անվամբ, ճանաչված պատմաբան, բանաստեղծ, երաժիշտ, հրատարակիչ ու քաղաքական գործիչ էր, որի կարևոր աշխատություններից են «Ստամբուլյայ պատմություն» և «Պատմություն համառոտ 400 տարապ Օսմանեաց Թագաւորաց»:

Այս քարտեզը պատահաբար հայտնաբերվել է Բոլոնիայի համալսարանի գրադարանի պահեստում 1991 թվականին և պրոֆ. Գաբրիելլա Ուրտոճյանի ծավալուն գիտական աշխատության նյութ է դարձել: Քարտեզն ընդգրկում է Հայկական բարձրավանդակը, Կասպից ծովից, Արցախից մինչև Մարմարա ծովի շրջանում հայկական, եկեղեցական ծխերը, ինչպես նաև կարևոր վանքերը, եկեղեցիները, մենաստանները, աղոթավայրերը, կաթողիկոսարանները և այլն: Հեղինակը տեղանունների հետ տվել է նաև նրանց մասին կարևոր, բայց համատարտ տեղեկություններ ու պատմական փաստեր:

Ըստ միջնադարյան սովորության՝ քարտեզն ուղղորդված է արևելքով դեպի վեր, որտեղ տրված են միայն բուն նպատակին ծառայող տեղեկություններ, իսկ աշխարհագրական կոորդինատները և այլ տվյալներ նշված չեն:

Էջմիածինը պատկերված է գեղեցիկ մանրամասնությամբ, ներառյալ Ամենայն Հայոց կաթողիկոսի հյուրընկալության տեսարանը: Վանա լճի բոլոր կղզիների մասին տրված են համատարտ, իսկ Վարազա վանքի մասին՝ ավելի ընդարձակ տեղեկություններ և այլն: Քարտեզի մեջ նաև նշված են Երուսաղեմում, Կիպրոսում և այլուր առկա կարևոր հայկական եկեղեցիներն ու վանքերը:

Վերևի հիշատակարանում տրված են տեղեկություններ հայոց պատմության մասին՝ նշելով պատմական կարևոր իրադարձությունները, իսկ ներքևի հիշատակարանում բացատրվում են քարտեզը պատրաստելու հանգամանքները՝ սրանց ավելացնելով տեղեկություններ կարևոր կրոնական կենտրոնների մասին:


Ստորագրված է «Ձեռամբ Կոստանդնուպոլսեցի Երեմիայի, պատկերահանի որդիս իմոյ տէր Մաղաքիայի»:

Արևելյան Հայաստանի տարածքը ցուցադրված է 36ա քարտեզի մանրամասում:

Չափերը՝ 358x120 սմ: Բոլոնիայի համալսարանի գրադարան, Իտալիա:

Մանրամասի համար տե՛ս Uluhogian, Gabriella Prof. – *Un'antica mappa dell'Armenia* – Longo Editore Ravenna, Italy, 2001.






Քարտեզ 36ա

Քարտեզ 37. Հայերեն առաջին տպագիր «Համատարած Աշխահացոյց» անվանված քարտեզը լույս է տեսել 1695 թվականին Ամստերդամում: Քարտեզի հրատարակիչն է Թովմաս Վանանդեցին, հենքի փորագրողներն են Ստոնեբեկ եղբայրները: Սկսած 1754 թվականից՝ նույն քարտեզը մի քանի անգամ վերահրատարակվել է Վենետիկի Սբ Ղազար միաբանության տպարանում:

Այս քարտեզն իրականում հղանդական քարտեզագրական ամենաարդիական ոճի աշխատանք է, որը թարգմանվել և տպագրվել է հայերենով: Քարտեզի ամենակարևոր նորարարությունը նրա մեջ առկա բոլոր տեղանունների հայերեն թարգմանությունն է, որն առաջին անգամ էր կատարվում այսպիսի բարձր մակարդակով:

Քարտեզը ցույց է տալիս երկու կիսագնդերը, որոնց վրա անկատար են ցուցադրված Հյուսիսային Ամերիկան և Նոր Հոլանդիան (Ավստրալիան):

Քարտեզը զարդարված է գեղեցիկ պատկերներով, իսկ դրա չորս անկյուններում նշված են տարվա չորս եղանակները, որոնք նաև պարունակում են առասպելական անձնավորություններ և կենդանակերպի անտմներ: Գիշերային երկինքն ու համաստեղությունները, երկրագնդի բևեռները, ինչպես նաև Արեգակնային համակարգն իր մոլորակներով ցուցադրված են առանձին բոլորակներով: Քարտեզի ներքևի՝ կենտրոնական հիշատակարանում պարսկերեն/թուրքերեն գրված է «Ջահան Բին», այսինքն՝ «Աշխարհացոյց»: Քարտեզի ցուցատախտակն ունի իր բանալին, որը պարունակում է հետևյալ չափաժո տեքստը.





Նորոգ քանդակ
գեղեցկավիպ հանրանշան,
Փոխաբերեաց Թօնա յեանորդ ոստ
Վանանդեան:

Փորագրութիւն յոյժ ցանկալի
Ի ձեռն եղբարց հարազատի.

Անդրիանու Ըսկոմբէկի,
և Պետրոսի քաջավարժի,
Ընդ Ղուկասու հրմտագոյնի,
Երկամբք բազմօր
յայտածողի.

Եղբօր որդի իմ անդրանկի
Պահէցէ էն իւրին ծոցի:
Յ Ամստերդամ, 1695:

Քարտեզում՝ Հայաստանի շրջա-
նում, նշված են Մեծ և Փոքր Հայքե-
րը, իսկ դրանց քաղաքներից նշված
են Վանը, Մալաթիան, Արզրոմը,
Երզնգան, Ուտան, Արճեշը և ուրիշ
ներ:

Չափերը՝ 158x124 սմ (չորս
մասից): Մատենադարան, Էջմիածնի
Վեհարան և Բրիտանական գրադա-
րան, Լոնդոն, Ref. Maps 920(89):



Քարտեզ 38. Յոհան Դավիդ Կոնիցերի (1684–1755 թթ.) «Դպրոցական և ճամփորդական ատլասը» պատրաստել է քարտեզագիր Ք. Վայզելը (1654–1725) Նյուրնբերգում, որտեղ քարտեզը տպագրվել է 1718 թվականին:

Ատլասը բաղկացած է երկու մասից: Առաջին մասն ունի արդի աշխարհի 120 քարտեզ, իսկ երկրորդ մասը, որը կոչվում է «Հին աշխարհի բացատրությունը», ունի Հին աշխարհի 44 քարտեզ: Սա Հին ատլասի երկրորդ մասի թիվ 44 քարտեզն է: Այս քարտեզը կոչվում է «Արևելյան աշխարհի պատմական քարտեզը մ.թ. 5-րդ դարում»: Այստեղ ցուցադրված են այդ դարաշրջանի թագավորություններն ու երկրների բաժանումները:

Հայաստանը բաժանված է Օսմանյան և Պարսկական կայսրությունների միջև: Պարսկական գերիշխանության ներքո են նշված Արտաշատը, Խորսան (Կարսը), Տիգրանակերտը, Նախիջևանը և Վանա լիճը: Իսկ Պարսկաստանի նահանգ Աղերբիգան-Ատրուպատենը (Ագերբալջան) տեղադրված է Արաքսից հարավ: Արաքսից հյուսիս Հայաստանն է, իսկ Կոսրից հյուսիս՝ Աղվանք-Ալբանիան:

Չափերը՝ 43x35 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps C.38.e.4:





Քարտեզ 39. Յոհան Դավիդ Կոչերի (1684–1755 թթ.) նախորդ էջում նշված «Դարոցական և ճամփորդական ատլաս»-ից է նաև այս քարտեզը՝ պատրաստված Նյուրնբերգում քարտեզագիր Ք. Վայգելի կողմից, որը տպագրվել է 1718 թվականին:

«Հայաստանի» այս քարտեզը Հին ատլասի թիվ 27 քարտեզն է: Այստեղ ցուցադրված են Հայաստանի նահանգներն ու կարևոր քաղաքները: Վանա լիճն անվանված է Արճեշ, իսկ Սևանը՝ Լիխնիտիս: Քարտեզը լի է աշխարհագրական փոքր վրիպակներով, որոնք համապատասխանում են ժամանակակից մյուս քարտեզներին:

Քարտեզը պատկերում է բյուզանդական կայսր Հուստինիանոսի ժամանակվա Հայաստանի տարածքը՝ բաժանված չորս վարչական մասերի, որոնք են Հյուսիսային, Հարավային, Արևմտյան և Փոքր Հայքերը՝ տարածված Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով:

Չափերը՝ 43x35 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps C.38.e.4: Նաև հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG101, այժմ՝ Մատենադարանում:



Քարտեզ 40. Հորանդացի Հերման Մուլլը (1678–1732 թթ.) բնակվում էր Լոնդոնում, որտեղ 1723 թվականին հրատարակել է իր հեղինակած «Երկրագնդի նոր հետազոտություն» անունով ատլասը, իսկ 1729 թ.՝ «Փոքր ատլասը»:

Փոքր ատլասի թիվ 33 քարտեզն այստեղ վերապրված ասիական Թուրքիայի քարտեզն է, որը ներառում է Անատոլիան, Պարսկաստանը, Վրաստանը և Հայաստանը, որը ժամանակին բաժանված էր Օսմանյան և Պարսկական կայսրությունների միջև: Արևմտյան Հայաստանն այստեղ անվանված է նաև որպես Թուրքոմանիա:

Մեծ Հայքի քաղաքներից նշված են Մուշը, Էրզրումը, Վանը և Ուրֆան, իսկ Երևանը պարսկական գերիշխանության ներքո է:

Չափերը՝ 25x20 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps C.21.b.3:
Նաև հեղինակի հավաքածու, Ref. RG05, այժմ՝ Մատենադարանում:





Քարտեզ 41. Գիյոմ Դելիլի կամ դե Լիլի (1675–1726 թթ.) «Կասպից ծովի շրջանի երկրները» կոչված այս քարտեզը նրա մահից հետո՝ 1730 թվականին, տպագրվել է Ամստերդամում իր որդիների միջոցով: Այս քարտեզը Դելիլի հանրահայտ «Նոր ատլասից» է, որն ունի 31 էջ տեքստ և 56 քարտեզ:

Քարտեզը ցուցադրում է Կասպից ծովի շրջանը, ինչպես նաև Հայաստանը, որի հյուսիսում են Մեգրեթիան և Քարթլի-Վրաստանը, արևելքում՝ Լեազի, Շիրվան, Դերբենդ և Մոզան շրջանները, որոնք 1918 թվականից ի վեր կոչվում են Ադրբեյջանի Հանրապետություն, իսկ Արաքս գետի հարավում տեղակայված է Պարսկական «Ադրբեյջան» անվանված նահանգը՝ Ատրպատականը:

Քարտեզում ցուցադրված են շատ այլ մանրամասնություններ: Վանա և Ուրմիո (Շահի ծով) լճերը ցույց են տրված նեղուցով միացած: Քարտեզագետն այս սխալն արել է հավանաբար այն պատճառով, որ, ըստ ավանդույթի, երկու լճերի ջրերն էլ աղի են և իրար շատ նման՝ եզրակացնելով, որ դրանք հետևաբար պետք է որևէ կերպ իրար միացած լինեն: Քարտեզում գծված են նաև միջբաղաձային ճանապարհները:

Հայաստանի շրջանում են նշված Բայազեդը, Շարուրը, Մակուն, Էջմիածինը (Ուչքիլիսա), Արտաշատը, Դվինը (Դավիին), Նախիջևանը, Կապանը, Սևանա լիճը և այլն:

Չափերը՝ 63x54 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդոն, Ref. Maps 1.TAB.8, f 35:

Նաև հեղինակի անձնական հավաքածու, Ref. RG62, այժմ՝ Մատենադարանում:



Քարտեզ 42 ↑ և 42ա →. Օսմանյան կայսրության այս քարտեզը վերցված է Յոհան Բառխառ Հոմանի (1663–1724 թթ.) «Նոր ատլասից»: Սա ատլասի 13-րդ քարտեզն է՝ հրատարակված Սանկտ Պետերբուրգում 1748 թվականին:

Քարտեզագիրներն են Գիյոմ Դելիլը և Յոհան Մաթիաս Հազեն: Չնայած այն պարագային, որ ատլասը հրատարակված է 1748-ին, բայց այդտեղ ընդգրկված Թուրքիայի քարտեզը թվագրված է 1737: Այս քարտեզը որոշ տարբերություններ ունի Դելիլի ատլասի քարտեզներից: Հայաստանի արևմտյան մասն այստեղ ցուցադրված է Թուրքական կայսրության սահմաններում, իսկ արևելյան մասը, այդ թվում՝ Ղարաբաղն ու Երևանը նշված են Պարսկաստանի գերիշխանության ներքո:

Կասպից ծովից արևմուտք ընկած երկրամասերի անուններն են Դաղստան, Լեզգի և Շիրվան, որոնց մի մասն այսօր ներառված է Ադրբեյջանի Հանրապետության տարածքում: Մողանը և Ադրբեյջանը տեղակայված են Արաքսից հարավ՝ Պարսկաստանի սահմաններում: Ինչպես Դելիլի մյուս քարտեզներում, այստեղ էլ Վանա և Ուրմիա լճերը պատկերված են ներդրյով միացած:

Չափերը՝ 58x49 սմ: Բրիտանական գրադարան, Լոնդրոն, Ref. Maps C.45.f.6:






Քարտեղ 42ա ↑. Հայաստանի տարածքի մանրամասնություններ քարտ. 41-ից: Այստեղ նշված են Երևանը, Էջմիածինը (Ուշքիլիսա), Նախիջևանը, Կապանը, Ստանա լիճը և այլն:

Հարաբազը տեղադրված է Հայաստանի արևելյան մասում՝ Սևանա լճից մինչև Արաքս և Կոր գետերի խառնուրանը: Հարաբաղի անվանման մասին տես քարտ. 52-ի բացատրությունը:

Կորից հյուսիս ընկած շրջանն անվանված է Շիրվան:



Քարտեզ 43. Ժաք Բեկլինի (1703–1772 թթ.) հինգհատորանոց «Փոքրիկ ծովային ատլասը» հրատարակվել է 1764 թվականին: Այս էջի քարտեզի խորագիրն է՝ «Հայաստանը, Վրաստանը և հարևան երկրները»:

Քարտեզի մեջ Հայաստանը ձգվում է համարյա ամբողջ լայնքով՝ հյուսիսում սահմանակից լինելով Վրաստանին, իսկ հարավում՝ Ադրբեջանին, որն Արաքսի հարավային ափերին տեղակայված պարսկական նահանգն է: Կասպից ծովի արևմտյան ափին առկա շրջանի անուններն են Դաղստան և Շիրվան: Նշված են բազմաթիվ գետերի, քաղաքների ու լեռների անուններ:

Ինչպես նշվեց, Ատրպատական–Ադրբեջան–Ազերբայջանն այստեղ ներկայացված է որպես Իրանի հյուսիսարևմտյան նահանգը, որը տեղակայված է Արաքսի հարավային ափերին, իսկ հյուսիսային ափերին տեղակայված է Շիրվանը:

